



ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԷՊԸ

Մ. ԱՔԵՂԵԱՆԻ

Ա.

ՎԷՊԻ ՊԱՏՄՈՒԱԾՔԵՐ

Փրէ Բաթմանը կամ Բաթմանայ կամուրջը Սասնոյ հարաւային կողմում է, որից անցնելով հարաւային գաղտերից մտնում են Սասնոյ լեռնահանգոյցը: Դա ըստ վէպի Սասնոյ և Մարայ սահմանն է: Մի պատմութեամբի մէջ, սակայն, Բաթմանայ գետի ու կամրջի փոխանակ յիշում է Անգղայ գետ ու կամուրջ (Թ-րդ, 414, 423) նոյն պարագաներով: Այս տեղ յիշում է և Անգղայ ձոր, ուր և Դաւիթը սպանում ու կզնւում է Կողբադնի մարդոց: Այս գետն ևս, որ Բաթմանայ գետից արեւմուտք է ընկնում, սկիզբն է առնում Տօրոսից ու Տիգրիսի մէջ թափւում: Խառնարանի վրայ է Անգղ գիւղը, որ այժմ Ազլ կամ Էգիլ է անւում. մօտին չի գլուխ լերին է բերդ ըստ մասին բնական և ըստ մասին ձեռագործ պատեալ պարսպաւ ու Ստորե բերդին յարեւելակողմն է Զո՛ւ լայն... (Ինճիճեան Նոր հայ. եր. 223:224): Դա Անգղայ ձորն է, և հին «Անգեղ ամուր բերդն», որ յիշում է Փ. Բիւզանդ (դ. իդ): Այստեղ Տօրոսեան լեռներում է հին Անգեղ տան գաւառը, որից հիւսիս Բալուն ու Զապաղլուրն (հին Հաշտեանք) են: Վէպն ուրեմն Անգղայ գետով ու կամրջով սրոշում է Սասնոյ իշխանութեան հարաւային—արեւմտեան սահմանը: Այն կողմը Մարբն է. և գաղնանը Սասնոյ հեղեղը ինչպէս Բաթմանայ, նոյնպէս և Անգղայ գետով Մարբ է իջնում:

Վէպը որոշում է Սասնոյ հիւսիսային սահմանն ևս, «Մուրադ զրի բերան», որից հարաւ Դաւթի չափանական երկիրն է (Թ-րդ, 87 հտ.): Բայց պատմող աքարանցին հարաւային սահմանի հետ շփոթելով հիւսիսայինը՝ Բաթմանայ կամուրջը դնում է Մուրադ ջրի վրայ, որ է Եփրատը կամ Արածանին: Այս տեղ Մուրադ ջրի վրայ Դուռգուրի մօտ հնումը (գուցէ և այժմ կայ) յետեւում է Իրօք մի ռմեծագործ կամուրջ, որի հետ շփոթւում է Բաթմանայ կամուրջը: Իսկ Դուռգուռ կոչւում է Եփրատի այն տեղը, Մշոյ գաւառի արեւմտեան ծայրում, ուր գետը Կինճի սարերում անցնում:

է մի խորանդունդ ապառաժոտ ձորից և զգարնուելով քարերուն նեղ կիրճով մը սղմուելով գուռգուռ ձայն մը կարձակէ: Եփրատն այստեղ շանկանի ի բարձանց իբրև վեց գրկաշափ և գործէ սահան կամ կարկաշտանսան մեծ, յորոյ ձայնէն կոչեն դնոյն սահան և զգիւզն Գուռգուռ: Այս Գուռգուռ քրդական գիւղը, որ Մշոյ դաւառի վերջին գիւղն է, Ս. Կարապետի հարաւային արեւմտակողմն են դնում, երկու ժամ հեռու Ս. Կարապետից: Այստեղից Եփրատն անցնելով մտնում է Ճապաղջրի սահմանները, ուր չիսկ և իսկ լայնանայ ձորոփոր գետոյն, և ջուր նորա ճապաղի. յայն սակս կոչի Ճապաղջուր կամ Ճապաղջուր» (Գրոց ու Բրոց, եր. 97 Ինճիճ. Նոր Հայ. եր, 181. 194.):

Սասնոյ իշխանութեան հիւսիսային սահմանը սակայն տա-
տանուում է վէպի մէջ: Ճիշտ է, Դաւթի հայրենական երկիրը Մու-
րադ ջրի բերանի՝ կամրջից այն կողմն է համարուում, բայց այդ
այն ժամանակ, երբ Մարամիկը Սասունից յափշտակել է հիւսի-
սային սահմաններից կալուածներ: Գրեթէ բոլոր պատմութեանքների
մէջ Ճապաղջուրն ու Մուշը, այսինքն Տարօնը, Սասունին են. «Մե
սարի բոլոր՝ ու չուր և ծծմակայ քիթ՝ Մշու վերևով... չուրի Սե-
ղանսըրու գօտէն՝ ք վի Ճապաղջուր Դուրանն յիշուում են իբրև
Սասնոյ տէրերի կալուած (1-ն, 144 հտ. 158):

Ճապաղջուրն ուրեմն վէպի մէջ Սասնոյ իշխանութեան վեր-
ջին ծայրն է հիւսիս արեւմտքում. նրանից այն կողմը, որ Բալուն
է, Մարը է համարուում: Ճապաղջուրը կոչւում է Ճապաղջուրն ու
Քօղէն, կամ Ճապաղջուր—Քօղէն (3-րդ. 21. 31 հտն.), կամ լոկ
Ճապաղջուր և լոկ Քօղէն՝ առանձին առանձին: Քօղէն մեզ համար
անհասկանալի է, և թէ միայն Դօթի Դօթիճ բառը չէ քօղէն արտա-
սանութեամբ, ինչպէս գտնուում են 1-ն պատմութեանքի մէջ «Սե-
ղանսըրու գօտէն ք վի... Դաւթը Ճապաղջուրը կամ Ճապաղջու-
րն ու Քօղէն իւր հօր մուլքն» է անուանում, որ Մարամիկը
Տարօնի հետ մինչև Մովսսար խլում է Դաւթի հօր մահից յետոյ,
բայց և այնպէս այդտեղի բնակիչները Դաւթին պատուում են չիբրև
իբրեց հին աղի տղէն: Ճապաղջրի միջով ըստ վէպի անցնում է
Ճապաղջուր գետը, որ է՝ Եփրատը, որի մէջ լողանալիս Դաւթն
սպանւում է իւր ցեղի աղջկանից (7-րդ. 72):

Ճապաղջուր գետին ուրիշ պատմութեանքի մէջ (3-րդ. 51) փո-
խանակում է Մեղրագետ, որի կամրջի վրայով անցնելիս սպան-
ւում է Դաւթը: Մեղրագետը, որ վրան ունեցել է երեք կամուրջ,
Եփրատի մի վտակն է ձախ կողմից. բխում է Դուռու և Ներքովթ,
լեաներից, Մշու դաշտի արևելեան կողմում, որ կոչւում է Զուխուր
Այստեղ Մեղրագետը բխելուց և երեք ժամուայ ճանապարհի չափ

հոսելուց յետոյ՝ լճանում է և կազմում շամբ, որ հնումը կոչվում էր Մեծամօր, իսկ այժմ ասում է Զուխուրայ շամբ։ Դրա մօտիկ են վէպի մէջ յիշուած Լոխոր, Ճապկիս, այլ և Աւզուտ գիւղերը (Համով-Հոտով եր. 115, Նոր Հայ եր. 181 հտ. 191)։ Զուխուրայ դաշտից, ուրեմն Տարոնից դէպի արեւելք Խլաթը, կամ Խլաթայ երկիրն է, որ վէպի մէջ, ինչպէս կը տեսնենք, առանձին իշխանութիւն է։ Դաւիթ գնում է Խլաթայ տիրուհու հետ կռուելու, կռուի մէջ Դաւիթ ձին թաղւում է ի Զըզուրայ շամբ մէջ տիրնս, որից ազատւում է դիւցազնը և գալիս Վոխորայ ջրի վրէնս, որ նոյն Մեղրագետն է. Բայց այստեղ Շմշըմ խանումի աղջիկը սպանում է Դաւիթին, երբ սա Լոխորայ. ջրի մէջ լողանում էր։ Այդ աղջկան՝ մահացու վէրք ստացած հսկան պատառում, ճգնւում է ձգում է սարու տկու դեղ, ու զըդ գեղու անուն դրեց Ճըւտիս Ճապկիս։ Ու եղ գեղ յար հմկա յանդ է Զըզուրայ բերան. ու տեսնւն Ճապկիս (1-ն, 181)։

Զուխուրայ դաշտի գլխին՝ վէպի մէջ յիշուած սարն է Մծմակայ քիթ, որ Սիմ կամ Սև սարի հիւսիսային մի ապագած բազուկն է, Վարտաքս կարկանդակ ի դաշտինս, մօտ երեք ժամ հեռու Մուշ քաղաքից՝ դէպի արեւելք (Նոր Հայ. եր. 182. Սարգսեան, Տեղագրութիւն ի Փ. և ի Մ. Հայս եր. 227)։ Այս Մծմակ կամ Մըծմական քիթ սարի ստորոտում է Աւզուտ գիւղն ու Աւզուտայ դաշտը, ուր Դաւիթ հանդիպում է գութանին և լծուած Վըք թաշէր հանէր սարու (Մծմակայ) գլուխ, ու ընդիէն քաշէր բերէր ցած, ու ըդ հմալ Սև սարու գլուխն ը վի գլխվրաւ էկաւ վըր Մառնիկ գեղի հիննս (1-ն, 166)։ Այս գիւղը Սիմ սարի ստորոտում է, հարաւարեւելեան կողմը։

Մշոյ դաշտի մէջ յիշուած է Մուս քաղաք (3-րդ, 15), որտեղ նստում է Մուշեղ Թագաւորը, ժամանակակից Բաղդաստի խալիֆային, որ Ա. Կարապետի վրայ կոխ է դալիս. իսկ արեւմտեան կողմը՝ Սեղաճօսը, որի վրայ բանակ է դնում Մարմեիրքը Դաւիթի վրայ կոխ գալիս (1-ն, 162)։ Այս լուր գտնւում է Արածանու աջ կողմը. Գուռգուռին մէկ քովն է Սեղանապար, որոյ գագաթը ուղիղ տափարակ է ճիշտ սեղանաձև, իսկ Գուռգուռին միւս ասին է Սև սար (Գրոց ու Բրոց եր. 99)։ Սեղանասարից հիւսիս արեւելակողմն է Ս, Կարապետի վանքը, զգալի վերին գլուխը Բայքէ լեռանց վրայ, իսկ Գուռգուռից դէպի արեւմուտք, տեսանք, եփրատը Կինճի լեռներից անցնելով մտնում է Ճապաղշուր։

Այսպէս վէպը Մամոյ իշխանութեան մէջ գնելով Ճապաղջրի հետ և Տարօնը, որոշում է և վերջինիս արեւելեան և արեւմտեան ծայրերը՝ Մծմակայ քիթից ու Զուխուրայ դաշտից մինչև

Սեղանոսար ու Մուրը կարագեալ Բայց կայ և մի ուրիշ ծայր. ՎՇոյ դաշտի բուն ծայրը Չարբոնորոյ ձորն է, ուստի կը մտնէ Եփրատն ի դաշտ: Այս ծայրը չի յիշում մէկի մէջ. բայց մեզ թւում է թէ դրա համար մի ակնարկութիւն կայ, Դաւթի հայրն ունի երկու փաշլեան՝ Բաքմանայ բուղայ և Չարբանաք բամի: Կարծում ենք դրանք Սասնոյ իշխանութեան հիւսիսային և հարաւային սահմաններէ՝ Բաթմանայ և Չարբանաքի՝ պահապաններն են: Երկուսն ևս Դաւթի հօր մահից յետոյ դաւաճանում և Մարմին-լիքի կողմն են անցնում, երբ սա Սասունից խլում է Ճապաղշուրը ու Մուշ՝ մինչև Մովսսար: Մարմինլիքը դրանց է յանձնում մանուկ Դաւթին, որ տանեն մինչև Բաթմանայ կամուրջը կամ Մուրադ ջրի բերանը ու սպանեն, բայց Դաւթը յաղթում է նըրանց և ըստ մի բանի պատմութեան Ներելով՝ Մարութայ վանքի պահապան է կարգում: Երկու ծայրերի, Բաթմանայ և Չարբանաքի պահապաններն ահա դարձած են՝ Մարութայ վանքի պահապաններ:

Այս են բոլոր աշխարհագրական անունները, որ յիշում են Սասնայ իշխանութեան մէջ: Դժբախտաբար երկու անուան (Աւագ սար և Լոռայ դաշտ ու սար) տեղագրութիւնը որոշել չկարողացանք: Բայց կարծում ենք դրանք ևս շինծու չեն, այլ երեք տեղի անուններ, ինչպէս միւսները:

Վէպը բուն Սասունի հետ Սասնայ իշխանների ձեռին դնում է և Ճապաղշուր ու Մշոյ դաշտը, թէպէտ և ոչ միշտ, որովհետեւ Մարմինլիքը կամ Բաղդադու խալիֆան այդ երկու գաւառը երբեմն խլում են Սասնոյ իշխաններից: Վէպի այս յիշատակութիւնն ևս իրական է. որովհետեւ ինչքան էլ հին ժամանակներից այս երեք գաւառները միացած են եղել, միջին դարերում Տարօնն ու Ճապաղշուրը՝ իբրեւ դաշտային երկիր՝ յաճախ ընկել են այլազգիների ձեռը: Սասնայ տէրերը, սակայն, Ճապաղշուրի և Տարօնի վրայ նայել են իբրեւ իրենց հայրենական կալուածի վրայ: Տեսնենք այդ պատմականը.

Սասուն, Տարօն եւ Ճապաղշուր.—Մեր պատմագիրներից Յովհաննէս կաթողիկոս (Մոսկվա. 1853, եր-66) և Վարդան Բարձրաբերդցի (Մոսկվա. 1861 եր. 110) սասունցիներին անուանում են առաջինը՝ «բնակիչք լեւինն Ֆաւորսի», իսկ երկրորդը՝ «ամբոխն Տաւորսի»: Բայց ուրիշներն այս Տաւորս լեռան մէջ դնում են Սասունը: Սիմ լեռ, Պոյթ լեռ և Շատախ:

Սանասունը և Խոյր իբրեւ առանձին գաւառներ յիշուած են Պորենացու աշխարհագրութեան մէջ: Սանասունը Աղձնեաց աշխարհի վերջին գաւառն է Սալնոյ ձոր (Բաղիշու) գաւառից յե-

տոյ, իսկ Խոյթ Տուրուբերանի առաջին գաւառն է, որից յետոյ գալիս են Ասպակունիք, որի տեղն անծանօթ է, և Տարօն: Սանասնայք (Սանասունիդայ) և Խութեցիք (Խոթայտայ) իբրև շերտեր ժողովուրդ Տաւրոս լեռան յիշուած է և Գէորգ կիպրացի յայնք իբր 600 ր. Ք. յ (Վ. Տոմաշէկ, Սասուն. եր. 10. Ինճիճիան, Ստորագրութիւն հին Հայաստանի, եր 70):

Եթէ հետեւը Խութ և Սանասունք տարբեր գաւառներ են եղել, զուցէ և տարբեր ժողովուրդներ Թոմա Արծրունու ժամանակ, սակայն, յետոյ դրանք կազմել են մի ժողովուրդ Խութ կամ Սանասնայք անուանով: Թոման Սանայ ամբողջ լեռնահանգոյցին տալիս է Խոյթ անունը (Ս. Պետերբուրգ 1887. Բ. դպր. 2. է. Գլուխներ): Նա Սասունցոց անուանում է. շեռնայինը... ի լերինն Խոյթ անուանեալ: Բնակիչք լերինն (Խոյթ). բնակեալք ի լերինն որ բաժանէ ընդ Աղձնիս և ընդ Տարօն: Եւ յաղագս խըրթնի և անհետազօտելի խօսից և բարուցն կոչից Խոյթ, յորոց անուն և լեռանն Խոյթ անուանի... Սոքա են գտեանք ասորաց, որ չուեցին զկնի Ագրամելեայ և Սանասարայ... յորոց անուն ինքեանք Սանասնայք զինքեանս անուանեն: Կիրակոս Գանձակեցին ևս (Մոսկուա. 1858 եր. 43) գրում է բնակիչք լերինն Խոյթայ, որ Սասունք անուանէին: Թոմա Արծրունին այնքան քաջ տեղեակ է Սասունցոց կեանքին, որ չի կարող սխալուած լինել, Կը նշանակէ Խոյթ կամ Խութ անունը հիւսիսից դէպի հարաւ է անցել և այդ անունով կոչուել է Տարօնի և Աղձնիքի մէջ եղած. ամբողջ Տաւրոս լեռը. զբնակիչները այդ լեռան բնակիչներին Խութ կամ Խութեցի են անուանել, իսկ բնակիչներն իրենք իրենց կոչել են Սանասնայք: Երկու տարբեր գաւառ միացել են և մի միութիւն կազմել:

Ինչպէս որ Խոյթ անունը տարածուել է դէպի հարաւ, այնպէս և Սանասունք անունը հարաւից անցել է հիւսիս՝ իւր մէջ ընդունելով և Խոյթը. և Սասուն ու Տարօն երկու սահմանակից գաւառներ են դարձած: Այսպէս Ղազարու կամ Առաքելոց վանքը, որ Տարօնում է, Թոմա Մեծորեցին (եր. 22 հտ.) գնում է Մովսարի և Խութայ լեռան մօտ, ըստ Մատթէոս Ուռայեցու (Եւրուսաղէմ, 18691. եր. 446) էւմերձ ի Սասուն: Կը նշանակէ Մատթ. Ուռայեցու ժամանակ Խոյթ մտնում է Սասունի մէջ: Այս տարեգիրն ուրիշ տեղ ևս (եր. 155) Տարօն և Սասուն սահմանակից է գնում. Էգնաց զօրքն այլազգեաց ի գաւառն Տարօն. որ և բռնակալեալ առ ստորտ լերինն Տաւրոսի մերձ ի Սասուն: և

Տարօնի և Սասնոյ այս սահմանակցութիւնը գտնում ենք և ուրիշների մէջ: Արիստակէս Լաստիվերացին (զ. իա.) գրում է.

«ի մտանել նորա ի Տարօն իջին զօրք ի լեռնէն Սիւն կոչեցեալ, զոր մարդկան սովորութիւն Սանասուն ասեն ըստ անուան նախնոյն իւրեանց: Սոյնը գտնուած ենք և խորենացու Հայոց պատմութեան մէջ, ուր Սասունցիք անուանուած են «բնակիչք Սիւն կոչեցեալ լերին» (Բ. ձգ.): Դրանք Սանասարի սերունդներն են, որ բազմանալով «լցին զՍիւն կոչեցեալ լեռն» (Ա. իս.): Իսկ այս «երկայնանիստ» Սիւն լեռան ստորոտում է Տարօնի դաշտը (Ա. գ. Ժ. Բ. հգ.):

Բերած հատուածներից պարզ երևում է, որ Տաւրոս, Սիւմ, Խոյթ մի և նոյն լեռան անուններն են և բնակիչք Տաւրոս լերին, բնակիչք Սիւն լերին, բնակիչք Խոյթ լերին (խութեցիք) և Սանասունք կամ Սանասնայք մի և նոյն ժողովուրդն են: Մի տեղ խորենացու պատմութեան մէջ (Բ. Ը.) Տաւրոս և Սիւմ նոյն իսկ նոյնացած են. «զլեռն Տաւրոս, որ և Սիւմ»: *

Այս անուններից հետզհետէ աւելի տարածուել է Սանասունք կամ Սասուն անունը, ինչպէս կայ և մեր վէպի մէջ. Տաւրոս և Սիւմ որքան գիտենք, մոռացութեան են տրուած, փոխանակուելով նոր Սև սար անունով. իսկ Խոյթ անունը, թէպէտև ըստ Թոմա Արծրունու և Կիրակոս Գանձակեցու ամբողջ Տաւրոս լեռան է անցած, այնուհետև ևս և մինչև այժմ պահուած է՝ միայն իբրև Տաւրոսի կամ Սիւմ լեռան (Սև սարի) մի գագաթի անուն Սասնոյ հիւսիս արևելեան կողմում, Մշոյ դաշտի արևելեան մասից հարաւ, որտեղից «Կիջնայ Սալնոյ Ձոր, որ Բաղէշն է» (Գրոց ու Բրոց. եր. 100): Կը նշանակէ Խոյթ այժմ մեռած է նոյն տեղի համար, որ կայ խորենացու աշխարհագրութեան մէջ: Բայց և այնպէս Խոյթը դարձեալ Սասուն կից ու միացած է յիշոււմ. այսպէս Թոմա Մեծոբեցին (եր. 22. 27.) դնում է եղակի ձևով. «Լեռան Խութայ և Սասնոյ», «որք գաւառին Խութայ և Սասնոյ»:

Անշուշտ Տաւրոսի այս բարձրութեան, որ է Սասնոյ, հիւսիս արևելեան մասը սկզբնապէս հակուած է եղել դէպի Տարօն, որ Խոյթ դրւում է Տուրուբերանի մէջ, իսկ հարաւային մասը, որ բուն Սասունն է, բնդհակառակը դէպի Աղձնիք է հակուած եղել, որ խորենացու. Աշխարհագրութեան մէջ Սանասունք դրւած է իբրև Աղձնեաց գաւառ: Նոյնը գտնոււմ են և խորենացու պատմութեան մէջ, ուր (Ա. իգ. Բ. Ը.) Սանասարի սերունդներից, որ Սիւմ լեռան վրայ են բնակոււմ, ծագում են Աղձնեաց բղեշխները, և այս վերջինների կալուած դրւում է ի միջի այլոց «Լեռան Տաւրոս, որ և Սիւմ»: Սակայն նոյն տեղում Սիւնեաց Սլաք նահապետին

1) Տպագրածի մէջ՝ որ-ի փոխանակ ուր է. բայց մի կարգ ձևադիւրների, ինչպէս և Մեծփանոս Տարօնացու մէջ որ է, որևէ հիշում է:

Վաղարշակ կարգում է պահել ղեկան (Սիմ), որսալ զքօշնն: Յետագայում այս ամբողջ Տաւրոսի բնակիչները, երբ իրենց մէջ մի միութիւն են կազմել Սանասնայք անունով, հակուած են եղել աւելի դէպի Տարօնի կողմը և նոյն իսկ միացած Տարօնի հետ: Թորենացու պատմութեան մէջ արդէն Սիմ լեռան բնակիչները Ողական բերդի տէր Սիլունեաց Սղուկ նահապետի հետ են, որին սպանելով ձենացի Մամկոնը՝ տէր է դառնում Ողական ամրոցին և Սիլունեաց կալուածներին: Փաւստոս Բիւզանդի մէջ (Ն. գ.) Ողականի տէրն է Մուշեղ Մամիկոնեան:

Այնուհետև ևս Սիմ լեռան բնակիչները կապուած են Մամիկոնեանց հետ, և Սասունը, հետը և Խուք վերցրած, Տարօնի հետ ենք տեսնում: Զենոր Գլակի մէջ, Թէպէտ և մութը կերպով, Տաւրոս լեռը դրուած է Մամիկոնէից երկրի մէջ, ինչպէս կոչւում է Տարօնն այդ գրքի մէջ (Վնեւտիկ, 1832. եր. 31. 33): Իսկ Թոմա Արծրունին (եր. 51), որ Սանասարին, Սասունցոց նախնուն, Սիմ լեռան վրայ է բնակեցնում, այս Սիմ լեռը պարզաբար դնում է Տարօնում՝—ասելով Թէ մանուկ Աշոտ Արծրունուն իւր դահեակը բառեալ տանի ի լեռան Սիմ, ի տեղի հայրենեաց բնակութեան աշխարհին Տարօնոյն:

Յովհան Մամիկոնեանի մէջ (Վնեւտիկ, 1832. եր. 45) այս լեռան Տաւրոսի ձեռագիրների մէջ ընթերցուած ունի լեռան Տարօնոյ, որ պատահական սխալ չէ, այլ լեռան հին անուան տեղ նորն է դրած: Տարօնը յետագայում Մշոյ երկրի է կոչւում, ինչպէս Թոմա Մեծորեցու մէջ (եր. 81) տեղիքին Տարօնոյ Մուշ կոչեցեալ, ուստի և Տարօնոյ լեռը, որ է Սիմ կամ Տաւրոս, այժմ ինչպէս տեսանք՝ Մշոյ լեռ էլ է ասւում:

Յովհան Մամիկոնեանի մէջ (եր. 13) Մուշեղ Մամիկոնեանը յիշւում է իբրև տէր Մշոյ և Խուքայ, Տարօնոյ իշխանն և Սասնոյ: Մուշ այստեղ հարկաւ քաղաքն է հասկացւում: Ուրեմն Խուք, Տարօն և Սասուն միացած են մի իշխանի ձեռի տակ: Մուշ առանձնապէս յիշւում է, որովհետև մայրաքաղաքն է: Նոյն գրքի մէջ (եր. 15) Գայլ Վահանը կոչւում է տէր Մշոյ, Գալհրայ, Խուքայ, Շատխոյ և Սասնոյ: Գալհար ուրիշ տեղ (եր. 30) գրւում է Գահար, Գարհար: Ինչիճեանը (Նոր Հայ. եր. 199) Մուշ քաղաքից 2 ժամ հեռու դէպի հարաւ դնում է Քարհան կամ Քարհար, աւելացնելով. «Այսպէս կոչեցաւ սակս լինելոյ անդէն հանք երկանաքարի: Յայս կողմն համօրէն գաւառին (Մշոյ) ոչ զոն գիւղօրէք, այլ անկանին լիւրիմ Մեոյ, որ ի հնումն կոչէին Տաւրոս կամ Տօրոս: Ի Քարհարն անդ է բերդ աւերակ, որ առ Յովհաննու Մամիկոնէի գրեալ կայ Գարհար: Ըստ Յովհաննու Մամիկոնեանի Գար-

սից զօրական Վախտանգն է շինում այս բերդը. չի վերայ լերինն Տաւրոսի շինեաց ամրոց, և կոչեաց զանուն նորա Գարհար, բանդի անդ ոմանք զանավէժ եղեն ի վերայ անասնոց՝ կարծելով թէ հեծեալք իցենն։ Այս ժողովրդական ստուգաբանութիւնը պարզ ցոյց է տալիս, ու բերդի անունը Քարհար է եղել, ինչպէս այժմ, և թէ Գարհար, Գահար, Գալհար աղաւաղուած ձեւեր են։

Այս Քարհար բերդից, որի տէրն է Վահան Մամիկոնեան, դէպի հարաւ ընկնում է Շատախ. Վիճակ բարեբէր. ունի անտառ և ջուր բազում, ի հարաւոյ Մշոյ, իբր 6 ժամաւ հեռի ի նրմանէ, և ի հիւսիսոյ Սասնոյ, ի վերայ բարձրագագաթ լեռանց, որք կոչեն Սև սար։ Երբեմն անկանի սա ընդ պէյին Մշոյ և բազում անգամ ընդ տէրութեամբ պէյին Սասնոյ (Ինճ. Նոր Հայ. եր. 200)։ Շատախը Յովհան Մամիկոնեանի մէջ (1, եր. 31. 54—56) կոչւում է և Արջ, որ ունի իւր առանձին իշխանը, բայց սա ենթարկւում է Վահան Մամիկոնեանին, որ է, ինչպէս տեսանք, Մշոյ, Քարհարի, Խութայ, Շատախի և Սասնոյ տէրը։ Սասունն ուրեմն միացած է Տարօնին և գտնւում է Մամիկոնեանց ձեռին։ Եւ բնականաբար Սասունցիք մասնակից պէտք է լինէին Մամիկոնեանց՝ Պարսից դէմ տուած կռիւներին։ Յովհ. Մամիկոնեանի մէջ (եր. 23) գտնում ենք. չեղիւ հարիւր այր աղտենաւոր թողեսլ ի Սասնացայ ի Մծմակն, որ ձեռագիրների մէջ ընթերցուած ունի. «.... ի Սասնաց ցեղեմ ի Մծմակն թողոյր»։ Աղաւաղուած բնագիրը պիտի վերականգնել, չի Սանատաւայ ցեղեմ, որով Սասունցիք են հասկացուում։ Այստեղ յիշուած Մծմակն անշուշտ մեր վէպի մէջ եղած Մծմակայ քիթն է։

Իններորդ դարու կէսերին Մամիկոնեանց տեղ Տարօնում Բագրատունիք են իշխում, և Տաւրոսի բնակիչները, ինչպէս յետոյ կը տեսնենք, ենթարկւում են նրանց և իրենց տէր ճանաչում։ Սասունի և Տարօնի այս յարաբերութիւնը երևում է և յետագայ դարերում. նոյն իսկ մինչև 19-րդ դարը՝ քրդական տիրապետութեան ժամանակ։ Ասել չի ուզել, որ Տարօնը իբրև դաշտային երկիր՝ աւելի յաճախ է ենթարկուել օտարազգիներին, մինչև ամուր Սասունը երկար պահել է իւր հայկական անկախութիւնը, բայց այդպիսի դէպքերում էլ անկախ Սասունի իշխանները, ինչպէս յետոյ կը տեսնենք, Տարօնի վրայ նայել են իբրև իրենց երկրին։ Բայց Տարօնի և Սասնայ միացեալ իշխանութեան ժամանակ հարկաւ առաջնակարգ դեր խաղացել է Տարօնն իւր Մուշ մայրաքաղաքով. Սասունն եղել է միայն Տարօնի գաւառներից մէկը։ Սասնայ այսպիսի միացումը Տարօնի հետ ցոյց է տալիս Սասունի գաւառ կոչումը Մշեցոց մէջ, «Մշեցիք զտաճիկ քուրդս»։

Մասնոյ կոչեն Սասնիքը, իսկ զհայս Սասնոյ կոչեն զաւառցիք» (Նոր Հայ, գր. 200 հտ.): Այս Գաւառ կոչումը Սասնոյ համար գտնում ենք և մեր վէպի մէջ. 1-ին պատմութեան ասացողը Դաւթի և Նշանի համար պատմելիս աւելացնում է. «Հմկայ լէ ըն սուրբ Նշան՝ հանդ է ի Գաւառ՝ Զօրկայ տուն» (1-ին, եր. 159): Կարծում ենք Սասնայ այս Գաւառ կոչումը պէտք է հասկանալ և Յովհաննէս կաթողիկոսի մէջ (եր. 67) «Գաւառ» գործածութիւնը Սասնոյ համար. Բուզան «ասպատակ զգօրս իւր սփռէ ընդ ծործորս ի լերինն Տաւրոսի և ընդ երեսս Գաւառին»:

Ինչպէս էլ լինի, պարզ է, որ Տարօնն ու Սասունը, վերջինիս հետ վերցրած և խոյթ ու Շատախ, անբաժան զաւառներ են և պատմութեան ընթացքում յաճախ միացած միևնոյն իշխանների ձեռի տակ: Սկզբում այս միացեալ զաւառներից Տարօնն է գլխաւոր դեր կատարել, իսկ յետոյ Սասունն, ինչպէս ասացինք, աւելի երկար է պահել իւր հայ անկախութիւնը, իսկ Տարօնն ենթարկուել այլազգիներին: Հետեւաբար մեծ ճշտութեամբ պատմական յիշողութիւն է պահել մեր վէպը, որ Սասնոյ տէրերի կալուած դնում է Սասնոյ հետ և Տարօն, որը սակայն Սասնոյ իշխանութիւնից խլում է Մարմելիք կամ Բաղդատու խալիֆան:

Նորնպիսի հին յիշողութիւն պահել է վէպը և Ճապաղջրի համար, որ հնումը կոչւում էր Հաշտեանք: Այս զաւառը Զորբորդ Հայոց մէջ է և ըստ Խորենացու պատմութեան (Բ. ը. գ. լա.) սահմանակից է Տարօնին արեւմուտքից: Ըստ Յովհան Մամիկոնեանի պարսիկներն արեւմուտքից գալով Մուշեղ Մամիկոնեանի վրայ Հաշտեանքով մտնում են Տարօն (եր. 15): Տարօն ու Հաշտեանք, ինչպէս և Սասուն ու Շատախ, միաբանում են պարսից դէմ և հնազանդում Վահան Մամիկոնեանին (եր. 30): Վահանի կռիւներին մասնակից է Հաշտեանից իշխանը, և կռիւը մասամբ Հաշտեանքում է լինում (եր. 44. 46 հտ. 52 հտ.): Ըստ Մաթէոս Ուռայեցու (հատ. ՃԶ. ՃԷ.) 11-րդ դարում այս Հաշտեանքը կամ Ճապաղջուրը ենթարկւում է Սասնոյ իշխան Թոռնիկ Մամիկոնեանին, որ ամբողջ Սասունից զօրք ժողովելով գալիս է Ճապաղջուր, կարծելով Թէ Փիլարտոս բռնակալը պիտի յարձակուի իւր վրայ: Թոռնիկի ձեռին է Աշմուշատ քաղաքն Արածանու վրայ, և նա պաշտպանում է այլազգիների դէմ Տարօնի դաշտաբնակ հայ ժողովրդին:

Ճապաղջուրն ևս անշուշտ, ինչպէս և Տարօնը, միշտ չի մընում Սասնոյ իշխանների ձեռին, և վէպը ճշտութեամբ այս յիշողութիւնն է պահում Սասնոյ իշխանութեան հիւսիսային սահմաններ դնելով Ճապաղջուր, Մուրադ ջրի բերան և Մովսսար, իսկ

հարաւից և հարաւ-արեւմուտքից Բաթմանայ կամուրջ և Անգղայ ձոր ու գետ: Դրանք այդ երեք ծայրերը, որ վէպի մէջ վէճի առարկայ են Սասնոյ իշխանների և Մարամալքի միջև, կազմում են Սասնոյ բնական ծայրերը: Վերջններ, օրինակ, Լանկթամուրի յարձակումը Սասնոյ վրայ 1394 թուին, և նոյն սահմանները կը գտնենք:

Ըստ Թոմա Մեծորեցու այդ ժամանակ թուրքմաններն էին տիրում Տարօնին ու Ճապաղջրին. նրանց ենթարկւում է և Սասունը Խոյթի հետ: Լանկթամուրն Ամիգի ճանապարհ ընկնելով անցնում է Բաթմանայ կամուրջը և ապա Սասնոյ հարաւում զօրքնն երեք մասի բաժանելով՝ ձախ թէւ Սասնոյ արեւմտեան կողմով դէպի Ճապաղջուր է ուղարկում այնտեղից յարձակում գործելու: աջ թէւ Սալնոյ ձորով դէպի Տարօն է անցնում Խոյթից յարձակելու: Իսկ ինքն ուղղակի հարաւից է սկսում բարձրանալ (Տոմաշէկ. Սասուն. եր. 50): Նա ինքը սաստիկ ջարդ է կրում, գլխաւորապէս տեղի ամուրթիւնից ու ցրտից, և իջնում Բաղէշով դէպի Տարօն անցնելու: Սաստիկ ջարդւում է Ճապաղջրում և ձախ թէւ թուրքման՝ Ղարայ Մանաղից: Այդ ժամանակ Վանայ լճի հիւսիս արեւմտեան կողմի բոլոր հայերը փախչելով հաւաքւում են Սուրբ Կարապետ: Թուրքմանները հայերին կողոպտելուց յետոյ՝ մնացած բաներն ու բազմութիւնը, իբրեւ իրենց սեփականութիւնը, շտառն յերաշխի յամիրայն խուժայ Շեխ Շարաֆ անունն: Սա ժողովըրդին անց է կացնում Եփրատ գետը ու բերում է Հասգեղ գիւղի մօտ որ հանի իլեատն Խուժայ և Սասնոյ իբրեւ մի ամուր տեղ: Ժողովուրդը չի ուզում գնալ, բայց բռնութեամբ հանում են շքնդ գառիվեր լերինն Խուժայ: Իսկ թուրքման Փիրհասանը այդ ժամանակ զօրքով իջնում է Խոյթ սարից դաշտը, բայց երբ Ջաղաթարի, այսինքն Լանկ թամուրի զօրքերը վրայ են տալիս, թուրքմաններն սւղում են առանց կռուի շելանել ի Մովսսար *) և գնալ ի լեան Մարաթու: Այս չի յաղդում նրանց, և ստիպուած ընդունում են կռիւը: Կռուից առաջ մի եղ մատաղ են անում յանուն Ս. Առաքելոց և ապաւինելով ի սուրբ ուխտն Ղազարու, ասում է ակառատես Մեծորեցին, յաղթում են Ջաղաթարին, որի զօրքերը պանթիւն և յանճամար վախից ի վայր մղեալ դահալէժ եղեալ սատակեցան: Իսկ արք զաւառին Սասնոյ և Խուժայ հաւատա-

*) Ձեռագիրներն ունին ժողովարան կամ ժողովասար. Սրուանձտեանը (Գրոց-ըրոց եր. 13. Ման.) յաջողութեամբ ուղղում է Մովսսար, եւր Առաքելոց կամ Ղազարու վանքին վերեն է և Մարաթու լեան երթալու նախադարձին:

ցեալք և անհաւատք յազգէն ժառանգ, այսինքն քրդաց, կողոպտում են Ձաղաթարի զօրքերին: Լանկթամուրի աջ թևն ուրեմն ջարդուած է Մովսսարի և Խոյթ լեռան վրայ: Մի օր յետոյ գալիս է Մուշ և ամօթապարտ Լանկթամուրն ու քաղաքի ամիրայից պահանջում, որ իրեն տանի թուրքմանի վրայ, որպէս զի վրէժ առնի: Բայց ամիրան պատասխանում է. «Ոչ է կարողութիւն ընթանալ մարդոյ զհետ նորա, զի ելեալ է ի լեռան Մարաթու, և եթէ երթայցես՝ մեծ և անպատմելի վնաս գործէ քեզ: Եւ Լանկթամուրը համոզուելով վերադառնում է Բաղէշ:

Այս անառիկ Մարաթու լեռը վէպի բեանձբիկ Մարաթուին է, որի վրայ եկող Կողբագիինն ասում է. «Մենք չենք կարող մըտնել Սասուն. Սասուն քար ու կապան է, և այս յարձակման կէտերը՝ Բաթմանայ կամուրջ, ճապաղջուր ու Մովսսար՝ նոյն վիպական ծայրերն են Սասնոյ:

Սասունը քաղաք եւ բերդ.—Սասնոյ իշխանութեան կեդրոնը: Վէպի մէջ է Սասունը քաղաքն ու բերդը, որ յաճախ յիշուած են իբրեւ գործողութեան գլխաւոր վայր: Սասնայ քաղաքի նկարագիր չկայ վէպի մէջ: Միայն գիտենք, որ այդ քաղաքի առջևից մի մեծ գետ է անցնում, որի վրայ Մհերը կամուրջ է կապում: Քաղաքը շրջապատած է պարիսպներով (7-րդ, 55), չորս հատ էլ դուռն (դարձեա՛հ) ունի, ինչպէս միջնադարեան քաղաքները: Հարկաւոր ժամանակ, երբ թշնամին վրայ է տալիս, կամ քաղաքին մի վրտանդ է սպառնում, դարձեա՛հները հողում են իշխանի հրամանով: Որ դրսից ներս մտնել չկարողանան: Քաղաքի մօտ շինուած է մեծ ամուր բերդը՝ իշխանների բնակութեան տեղին:

Սասնոյ բերդ և քաղաք իրօք եղել են: Սասուն գաւառը, գրում է Ինճիքեան (Նոր Հայ. եր. 201), «ունի բերդ զօրաւոր նոյնպէս Սասուն կոչեցեալ ի վերայ բարձր լեռին»: Այժմ գեոմիւսում են Սասնու բերդի աւերակները բուն Սասուն կոչուած գաւառակում, որ Մշոյ հարաւ արևելեան կողմում է, 8 ժամ հեռաւորութեամբ, «ցից ցից, սրածայր և տաշլամա քարերով պատած» մի տեղ: Դեռ ևս տեղ տեղ կան կիսախարխուլ պարիսպները: Դա «Դաւիթ-Մհերի բերդն» է, որ գտնուած է երկու կողմից մի խրամառ ունեցող զգեղածիծաղ բլրակի զագաթի վրայ, որի շուրջն ու ստորոտը խառն ի խառն թափթփած կան այդ գաւառի գիւղորայքը: Բերդի ստորոտն աջ ու ձախ քերելով կանցնին երկու գետակներ, որոնք կը սկզբնաւորին Մովսսարի փէշերէն և բխրաւոր գալարումներով շուրջ առեալ նորան՝ կը շտապեն դէպի Փրէ Բաթման (Արձագանք 1894 № 147):

Դա հայ դիւցազունների բնակավայրն է եղել ըստ աւան-

դուքեան, Սասնոյ բերդը: Դա վէպի Սասնոյ տունն է, Ջոշանց տունը, կամ Ջոշ տունը:

Բերդի հարաւ արեւելեան կողմում կայ հիմա Քաղիկի գիւղը, վիպական Սասնոյ քաղաքը: Բերդից դէպի Քաղքիկ տանում է մի սալայատակ գեղեցիկ ուղի: Վաստ աւանդութեան, երկիրն անկարող էր իւր հողէ մակարդակի վրայ անփնտռ ընդունել ու պահել՝ քան զփիղ յաղթանդամ, քան զգոմէշ ուժեղ և քան զառուծ արի ու կատաղի Դաւիթ ու Մհերին, այլ և Յոան Վիգոյին, երբ նոքա իրանց հրէշտականման գողտրիկ ու չքնաղ, բայց քան զլեառն մի հսկայ, սիրուհու հետ զբռնելու կելնէին: Վերջապէս երբ ոչ մի քար չեն կարողանայ դռնել, որ երկրի մէջ չխրուի իրանց ոտքեր, կը վճռեն այլ ևս ջարդու (երկանաքար) և չախմախ (որձաքար), գիլու քարերէն (գայլախաղ) մի լայն ու գեղեցիկ սալայատակ ուղի շինել: Այս ուղիով նրանք օրը երկու անգամ, առաւօտ և երեկոյ՝ գնացել են իրենց զովասուն զբօսավայրը, որ Նդեմեան դրախտի պատկերատիպն է եղել և ուր պակասել է միայն հաւու կաթն, շերկնուց սիւնն և ժծովի փարդայն (Արձագասն Նոյն):

Սասնոյ բերդի և քաղաքի հիմը դնում են ըստ վէպի մի զվէրունի սարիձ մէջ կամ ճշոյ եաքանի տեղում (Յ-րդ, 66. 7-րդ. 48): Ազնանց տոհմի նախնիները՝ երկու եղբայր՝ Սանասար և Բաղդասար (Ասլիմելիք, Աբամելիք): Քաղաքի մէջ, որ առաջ են շինում, բնակեցնում են իրենց ռամիկ ժողովուրդը, ապա մեծ մեծ քարեր են կրում, աւարտում են բերդը: Քարէ սան քարէ սուն զարկեցին, ձազ թալեցին, ու թամամեցին զբերդը (1-ն, 143): Բայց այդ բերդը կամ Ջոշանց տունն այնքան մեծ է, որ առաւօտը դռնից դուրս եկողը մինչև երեկոյ հազիւ պտտում է չորս բոլորը: Բերդի մէջ շինում են և մի փոքր եկեղեցի:

Բերդի Սասուն անունը վէպի մէջ այլ ևս Սանասար անունով չի բացատրում, ինչպէս Թոմա Արծրունու ժամանակ, այլ բերդի շինութեան յատկութիւնից: Քարէ սան սուն էք զարկել, ըտրա անուն տեղնի Սանսուն, Սասուն (1-ն. 144. Յ-րդ. 19): Պարզ է, որ այս ժողովրդական ստուգաբանութիւնն այն ժամանակից է գալիս, երբ հին Սանասուն (ք) անունը դարձել էր Սանսուն, որից նոր յառաջացել է այժմեան Սասուն ձևը: Դա մի անցման ձև է, հաւանօրէն 12-ից 14-րդ դարերում գործածուած:

Բնակիչները: Բերդի անուան բացատրութեան համար վէպի մէջ կայ և մի ուրիշ ստուգաբանութիւն, որ աւելի նոր է: Անունը դնողը բերդի մեծութեան առաջ սարսելով, ասում է. «էս տուն չի, սասուն ի» (Յ-րդ. 67 հա. ք. 9-րդ, 408): «Տեսաւ որ մեծ մեծ քարեր են բերէ, ասաւ. «էս սասունա. էս թնշ քարեր էք դրեր. սա-

սուն (սարսելի) քարեր առ (7-րդ, 48). կամ «Բանի՛ր ապառւմ բերդ մի», բացազանչում է անուն զնողը: Այս ստուգաբանութեամբ ուրեմն բերդի Սասուն անունը կապւում է սարսել բառի հետ, իսկ Սասուն ձևը, որ գործածական է շատ կողմերում Սասնոյ համար, նոյնանում է սասոււմ-ցասոււմ բառի հետ, որով և ցոյց է տրւում բերդի մեծութիւնն և առհասարակ Սասունցոց ահ ու ցասում լինելը շրջապատի բնակիչների համար: Եւ իսկապէս պատմութեան ընթացքում Սասունցիք շատ անգամ են ահ ու սարսափ, ցասում պատուհաս դարձել, մարդիկ, որոնց համար Թոմա Արծրունին գրում է թէ «են զազանաբարոյք, արինաբարուք, առ ոչինչ համարելով զսպանումն եղբարց հարազատաց, նաև զանձանց ևս»:

Իրենց այս յատկութիւնը պահում են Սասունցիք նոյն իսկ մինչև 19-րդ դարը, երբ գրում է Ինճիճեան. «Բնակիչք Սասնոյ են քուրդք և հայք, որոց երկոքին ևս զմի և զնոյն ազատութիւն ունին, արք յաղթանդամք և քաջասիրտք, երևելիք ի կորովութիւն մարմնոյ, ահեկք ի պատերազմի, որոնց միայն ստուարութիւն հեքաց՝ մանաւանդ ոմանց ի նոցանէ ահացուցանէ զտեսողսն, որք ի սկզբանէ անտի եղեն՝ ինքնագլուխ, ոչ ումեք ծառայելով. և ոչ ոք ի փաշայից կամ պէյից կարող զտաւ զնոսա նուաճել սակս զօրութեան ուժոյ սոցա և սակս ամուր վայրացն» (Նոր Հայ. եր. 200):

Վէպի մէջ սասունցիք միայն հայ են, և նրանց ահարկու լինելն երևում է շատ զօրեղ կերպով: Թշնամիք նրանց հոտն առնելով սարսափում են: «Վա՛յ էսի Բաղդասարի խուտն ի եկաւ, կը սպանի Սասմայ տան խուտն ի», ասում է Կուպ դևը հանդիպելով Մհերին, և ահից հիւանդանում է, նա որ այնքան ոյժ ունէր, որ մի ձեռով զվաղցի քար կը թալէր մէկ աւուր ճամբախ կերթէր (3-րդ, 144 հտ.): Եւ ինչպէս չսարսափեն Թշնամիները, քանի որ դիտեն, թէ այդ քար ու կապան տեղում ինչպիսի մարդիկ են ապրում:

«Մարդ կայ էն երկիր՝ զազանական...

էն ճժեր որ նոր են ելած՝ դիւանական...

էնոնց խոտերն են կծան...

Իրանց նետ կայ քանց ձիթիցի գերան...

Ինչ կը զարնեն մարդու ջան,

Բերան կը բացուի քանց պատուհան:

(1-ն, 161. 3-րդ, 103. 7-րդ, 17):

Պարապմունքը.—Այս հայ լեռնականներին իրենց երկրի բնութիւնն և վարած կեանքն ու պարապմունքն է դարձրել զօրեղ: Բուն բաղաժի կեանք ի հարկէ չէր կարող զարգանալ բարձր

լեռների և անտառների մէջ, թէպէտ և բացի Գազոխ գիւղից, որ Սասմայ քաղաքի մօտ է (3-րդ, 64 հտ.), ուրիշ գիւղեր չեն յիշուած վէպի մէջ բուն Սասունում: Բայց Սասմայ քաղաքացիք հենց իսկապէս գիւղացի են, գիւղացի են նոյն Թագաւորն ու իշխանները:

Դրանց բոլորի գլխաւոր պարապմունքն է անասնապահութիւն, մեղուաբուծութիւն, և ապա որսորդութիւն, երկրորդաբար միայն երկրի մշակութիւն: Եւ դա Սասնոյ կեանքի իրական պատկերն է, որ ժողովուրդն իւր վէպի մէջ բաւական հշտութեամբ հանում է:

Երկրագործութիւն անշուշտ չէր կարող ծաղկած լինել միտեղ, ուր մարդիկ բնակում են, ինչպէս գրում է Թոմաս Արծրունին, «ի խորաձորս և ի փապարս լեռանց և ի պրակս մայրեաց, ի գագաթունս լեռանցս: Հեշտ չպիտի լինէր կեանքը մի երկրում, որի հողը շատ քիչ բան է տալիս: «Հնաբաւորեալ յապրուստ անձանց, ասում է Թոմաս, վճարեն զկարեւոր պէտս իւրեանց լի աշխատութեամբ և սաստիկ տառապանք... և զպէտս կերակրոցն վճարեն ի սերմանց ինչ, առաւել ի կորեակ կոչեցեալ սերմանէն, զոր ոմանք ի սով ժամանակի հաց անուանեն. և զնոյն ուռցեալ ոսիւք ի միջոցս պրակացն կամ երկմատնի փայտովք սերմանեալ: Այս կորեկը, սով ժամանակի հացը», որ հին ժամանակից ցայսօր Սասունցոց ապրուստն է, երևում է և վէպի մէջ իբրև գլխաւոր ցանք: Գրեթէ բոլոր պատմութեանքների մէջ յիշուած է կորեկի արք, որի տէրը մի հաւերկամ պառաւ է: «Եթէ շունչ ըուլֆաթ ունիմ, ու եօթ կորի կորեկ», ահա մի ամբողջ ընտանիքի ապրուստի միջոցը: Աղքատութիւնը սրանից աւելի չի կարող լինել: Կորեկի համար գութան ու գոմէշ հարկաւոր չէ ու չկայ. այնպէս որ լեռնական Դաւիթը Մշոյ դաշտում առաջին անգամ գոմէշ տեսնելիս՝ զազան է կարծում. «Տեսաւ գոմէշ մի տլի մէջէն ելաւ Դաւիթ որ հմլայ բան սկի չէր տեսէ, քաշեց զգուրդն ու կայնաւ, որ գոմշուն զարկէր: (1-րդ 167): Մի ուրիշ տեղ (3-րդ, 42) հարցնում է գութանաւորին թէ իրիկունը որ կերթա՞ւ ինչպէս կը սարքէք գութանը:

Բացի կորեկից յիշուած է և ռաղկամի արք (3-րդ, 98): Սասունցոց, յատկապէս Դաւթին, ծաղրում են յաճախ «շաղկմակեր» բառով (3-րդ. 114, 108), որից երևում է սիրելի է շաղկամը: Յիշուած է և ցորեն, բայց սակայն լեռնային գոլոյ երկրին՝ սակաւ բերէ. ուստի բնակիչքն ի Մշոյ առնուն զցորեանն» (նոր հայ. 201): Խորաձորերում անշուշտ աւելի տաք է և այստեղ աճում են և պտղատու ծառեր, նոյն իսկ խաղող: Վէպի մէջ յիշուած է յատ-

կապէս Նուռը, որ և իսկապէս Սասնոյ ձորերի գլխաւոր բերքերից մէկն է: «Նաան գինին» մեր հերոսների սիրելի խմիչքն է խնջոյքի ժամանակ (3-րդ, 101, 7-րդ, 15):

Լեռնային արօտները մեղուաբուծութեան և անասնապահութեան համար շատ յարմար են: Սասնոյ բերքերից մէկն է «մեղր ազնիւ» (Նոր հայ. 201), և ըստ վէպի մեղրն ու կարագը Սասնում շատ առատ է. «եղը—մեղրը» (եղ ու մեղր, նմուշ). անշուշտ «նաթով», այսինքն կորեկի հացով շինած սիրելի կերակուրն է երեխաների համար (3-րդ, 34, 8-րդ. 21): Դաւիթը Մարութ անգամ իւր հայրենի մեղր ու կարագով է սնուում, իսկ Մարութայ վանքի պահապանի ուտելիքն է ռօբէն մէկ տիկ մէջ մեղր, կարագ (7-րդ, 5, 11):

Աւելի կարեւոր տեղ է բռնում հարկաւ անասնապահութիւնը, որով պարապում են և իշխան և ռամիկ: Դաւիթը հետզհետէ դառնում է զառնարած, հորթարած և նախորդը: Ոչխար, այծ ու արջառ են գլխաւոր կենդանիք: «Մեր խոլբաշին զացէր Սասուն ի բան,—ասում են Մարայ կանայք,—Մուպալ եղներ բերէ լծան. զկարմիր կովեր բերէ կթան» (1-ին 160. 7-րդ. 12): Յիշուում են և ձիանք, միայն իշխանական տոհմ համար: Տաւարը Սասունցոց ապրուստն է, կերակուրն ու հագուստը, (3-րդ, 91): «Եւ է զգեստ նոցա ասուիսի ծածկոյթ մերկութեանն, և օդոտիցն հնարաւորեն զձև կաշկաց» ի մորթոց այծից կազմեալն, ասում է Թոմասն. «և միով կերակրիւ և միով հանգերձիւ բաւականանան զամառն և զմիեռն»:

Անասնապահութեան հետ կապուած է «եայլաղ զնալը»: Սասնոյ ձորերում շոգ է, ուստի և ամառը ելնում են եայլաղ, յատկապէս Մովսսարի վրայ (7-րդ, 49 հտ. 67): Այստեղ սարն են դալիս և «Մարամելքի էլը», և խլաթցիք, ու կռիւներ են տեղի ունենում նրանց և սասունցոց մէջ (3-րդ. 32 հտ.):

Լեռներում ու անտառներում շատ են զազաններ: Նախորդը կամ հորթարած Դաւիթը, որ նախիրը հանում է սարը, տեսնում է արջեր, գայլեր, խոզեր (8-րդ 26), առիւծներ ու վագրեր փախչում են (3-րդ, 92. 7-րդ. 8 հտ.): Դաւիթ Ժողովում է զրանց: Ուրիշ անգամ (3-րդ, 94) նապաստակ, աղուէս, կուղ, կոռորաշ (?), Ժողովում ու բերում է Սասմայ քաղաքը: Քաղաքացիք ստիպւում են զոները փակել զազանների վտանգից ացատուելու համար: Սա մի ընդհանուր վիպական գիծ է անշուշտ, բայց ցոյց է տալիս, թէ Սասունում որքան մեծ երկիւղ կայ նոյն իսկ քաղաքում զազանների ձեռքից: Մի ուրիշ վիպական գիծ է և Առիւծածև Մհերի մասին պատմութեամբ, թէ մի առիւծ է լոյս ընկնում ճանապարհների վրայ, զնացող եկող կտրւում է, ու սով է ընկնում

Մասուն, մինչև Մհերը սպանում է այդ առիժը, երկուսի ձեկնով: Գազաններն ուրեմն ըստ վէպի մեծ վտանգ են պատճառում և քնաս տալիս Մասունցիներին: Այդ լեռներում ապրողները միշտ պատրաստ պիտի լինեն գազանների առաջ: Ե՛ւ են ստացել՝ ղէնըս աշտեայս, գրում է Արծրունին, հանապաղ կրելով ընդ ինքեանս, ի պատրաստութիւն գազանացն, որք ի լերինն ընակեն:»

Բայց գազաններն եթէ կոտորում են ոչ թէ որսորդութեան, այսինքն ապրուստի համար, այլ նրանցից ազատուելու: Որսի գլխաւոր կենդանիքն են նապաստակ, աղուէս ու կուզ, որոնց որսալու սովորութիւնն ըստ վէպի Դաւթի ժամանակից է մնում: Ե՛ւն վախտէն լպտորակն էլ չուր մկայ էլ հա կզենեն, հա կուտեն. աղուէս, կուզ կէնեն քուրք, կը հագնեն» (3-րդ. 95), Այս երեք որսի կենդանիներն, ինչպէս երևում է, ամենից տարածուածն են. բայց բացի սրանցից կան որսի երէնքեր: Սև սարում, Ծովասարում ու Աւագ սարում (9-րդ. 375) կան վէրու ոչխար, վէրու տաւար (3-րդ. 65), մարալ, խազալ (վայրի այծք, 6-րդ. 95), Չէյրան, քիւլի ոչխար (այծեամ, 8-րդ. 27): Այնտեղ գնում են որսորդութեամբ սէհր անելու» և «քէֆանելու». բայց և որսալով բերում իրենց համար «ապրուստ են անում»:

Մասնոյ այս Սև սարը կ'սմ հին Օիմ լեռը իբրև որսավայր ի հուց յայտնի է: Խորենացին (Բ. Բ) Սկունեանց նահապետ Սլաքի համար գրում է. «Զսա կարգէ (Վաղարշակ) պահել զեռանն, որսալ զբօշսն: Այստեղ այս սարի վրայ է ոտքի ելնում Սղուկը, երբ նրան սպանում է, ըստ հին վէպի Ճենացի Մամիկոնը:

Մի շատ հետաքրքիր որսորդութեան եղանակ կայ մեր վէպի մէջ. Այս որսի սարերի՝ Սև սարի, Ծովասարի ու Աւագ սարի շուրջ (նայելով թէ ո՞ր պատմութեան մէջ ո՞ր սարն է իբրև որսորդութեան վայր դուրս գալիս) Մասնոյ իշխանները, յատկապէս Դաւթի հայրը, պատ են քաշած, բըջերով ամրացրած, ու պարսպի ներսը երէնքերով լցրած: Ե՛ւնու խէր պատ են քաշեր սարու չորս կողմ. սարու ոչխար որ եկեր էր թափեր մէջ, էլ չէր կարցի դուրս ելնի: Դռներ բացին մտան ներսը... Իսկ Աւագ սարը «բաղաններով» պատած է, այնտեղ «վէրու ոչխարը բռնաւոր է» (3-րդ. 24, 96, 7-րդ. 9 հտ.): Մենք յետոյ կը տեսնենք մեր նոր վէպի յարաբերութիւնը հին վէպի հետ, բայց այստեղ աւելորդ չէ յայտնել, որ այս որսի սարն իւր շուրջը քաշած պարսպով մեր հին վիպասանքի մէջ պատմութեան մի յիշողութիւն է, Մենդոց Անտառի և Խոսրովակերտի: Ե՛ւնկէ և մայրի մեծ... և որմովք ամբացուցանէ, արգելով ի ներք այծեմունս երազունս և զեղանց և զեղջերուաց ազգ և ցիուս և վարազս. որք ի բազմութեան անեցեալ

լցին զանտառն, որովք ուրախանայր թագաւորն (Նրուանդ) յաւուրս որսոց» (Պորեն. Բ. Խա): Նոյնը գտնուած ենք և Տրդատի որդի Պոսրովի համար պատմուած Բիւզանդի մէջ (Գ. Ը.): Վաչէ Մամիկոնեանը Պոսրովի համար տնկում է երկու անտառ և զգրկոսեան տեղիան պարսպեալ փակեցին... և ապա զամենայն երէս և զգազանս հրամայեաց ժողովել թագաւորն և ընդ զքաղաքորմարն, զի լիցին նոցա տեղիք որսոց զքոսանաց ուրախութեան թագաւորութեան նորայ: Պորենացին աւելի սեղմ պատմելով նոյնը՝ աւելացնում է և հաւորսութիւն, որ, ինչպէս յայտնի է, մեր իշխանների սիրելի պարապմունքներից մէկն է եղել:

Մեր վէպի մէջ ևս Սասնոյ տէրերի գլխաւոր զուարճութիւններից մէկն է հաւորսութիւնը: Դաւիթը թռչուն, գլխաւորապէս լոր, որսում է՝ ինչպէս մեր հին իշխանորդիք՝ քաղէով: Երբեք համար մէկ բաղայ բռնեց, Քուսկիկ Ջալալին դուրս քաշեց ու գնաց աւելուշ անկուռ Գնաց մի կորկի արտի ռաստ եկաւ, ու քաղէն թողեց մըջ կորկին ու բաւականի լոր բռնեց. առաւ լորեր, ու ետ դարձաւ, եկաւ տէրարջ տուն. լորեր խտրեցին, եփին, կերան» (3-րդ, 31): Նա հաւորսութիւն է անում, սակայն, գլխաւորապէս Մովսսարում (7-րդ. 67): Հաւորսութեամբ պարապում է և Մեծ Մհերը. «Աւուղուշ կէնէր, կը բերէր Սասունցոց վրէն կըցըւէր» (3-րդ. 24):

Պեանքի գծեր—Ինչպէս են կրթւում և ապրում այս զգիւշանական ճփերը: Շատ պարզ ու նահապետական ձևով՝ Ներսէսը կեանքն ու բարքերը, նիստ ու կացը, ընտանեկան և հասարակական սովորոյթները և այլն բոլորովին նման է նոյն են, ինչ որ մեր ուրիշ կողմերի գիւղացիներինն ընդհանրապէս: Ասացողներն իրենց կեանքն ու հոգին են պատկերացրել վէպի մէջ, և մենք այն տեղ գտնում ենք մեր գիւղացու կեանքի բազմազան կողմերը բաւական մանրամասն ու սիրով նկարագրուած՝ երեխայի ծնունդից սկսած մինչև մահը: Այդ բոլոր կողմերի վրայ մի առ մի կանգ առնելը մեզ շատ հեռուն կը տանէր, և հարկ կը լինէր մի առանձին գիրք գրել, այնքան շատ նիւթ կայ մեր ժողովրդի կեանքի համար մեր վէպի մէջ: Մենք միայն մի քանի գծեր կ'առնենք՝ Սասունցոց պատկերը լրացնելու համար, թէպէտև, կրկնում ենք, այդ գծերը մեծ մասամբ յատուկ Սասունցոցը չեն միայն, այլ ընդհանրապէս բոլոր հայերինը:

Մնում է մանուկը, որի ծնունդը փափագելի է իբրև Աստուծու օրհնութիւն, և նրան պինդ կապում են օրօրոցում, որի մէջ լալիս ու ճմլկում է: Տանը պահում են մինչև երեք տարեկան հասակը, երբ արդէն փողոց է դուրս գալիս և ազատ շարժ-

ւում փողոցներում և պարտէզներում՝ խաղալով իւր հասակակից երեխաների հետ։ Նրանց գլխաւոր զբաղմունքն է հան (վէզ) խաղալը։ Վէզի վրայ յաճախ կուում են և իրար քիթ ու պոռնոզ փարգում, թե ոտ կոտորում։ Յաճախ շուլալւում, հեծնում են ծառեր և չարութեամբ իրար ֆնասում։ Հող ու աւազ, ահա նրանց խաղալու նիւթը։ աչք ու երես, ոտ ու գլուխ թաղուած կեղտի ու հողի մէջ, որ նրանք իրար վրայ ածում են։ Հսկողութիւն ընաւ չկայ վրաները։ Ֆնասուած երեխաների ծնողները շատ շատ պարտք են համարում գանգատուել ֆնասող երեխայի տէրոջը։ Սա իւր կողմից մի պատիժ է տալիս այդպիսի երեխային, այն է չի թողնում խաղալու գնայ, փակում է տանը, երբեմն և ծեծում։ Բաւական է, որ հսկող աչքը հեռանում է, երեխան դարձեալ իսկոյն փողոց է թռչում (3-րդ, 84. 7-րդ, 4,55. 9-րդ, 371, 415 և այլն)։

Բացի դրանից՝ վէզի մէջ յաճախ յիշում է գուրդ կամ հոլ խաղը, որ սակայն մեծերի խաղն է. փոքրները միայն հանդիսատես են լինում այդ խաղին, քիչ անգամ հակառակ մեծերի կամօքին մէջ ընկնելով և զայրացնելով նրանց։ Բայց երեխաները երբեմն և փոքր հասակից մասնակից լինելով սովորում են այդ խաղը և իրենք իրար հետ խաղում։ Մեծերը ձիով են խաղում. փոքրները ոտով (7-րդ. 5-րդ 65. 8-րդ 21 հտ. 9-րդ. 371, 412 հտ. և այլն)։¹⁾ Այս երկրորդ խաղի մէջ ուրեմն փոքրները նմանող են դառնում մեծերին։ Այդպիսի նմանողական խաղերից մէկն էլ այն է, որ իրենց համար նետ աղեղ են շինում և ողջ օրն արտերն. ճնճղուկ, լոր որսում։

Երեխան որ տաս-տասնուհինգ տարեկան է դառնում, փորձում են մի արուեստի կամ ուսումի տալ. բայց մեծ մասամբ բան չեն սովորում և ոչ մի արհեստ էլ գլուխ չեն հանում։ Ուսման վարժապետն է տէրտէրը, որ երեխային Սաղմոս կարգալ կամ ասել է սովորեցնում։ Սակայն այս ուսման ժամանակին հէնց և դրանից էլ առաջ, չորս-հինգ տարեկան հասակից երեխան արդէն չափահաս է համարւում և մասնակցում տան աշխատանքին, նախելով տարիքին գառնարած, հորթարած ու տաւարարած դառնալով։ Այդ ժամանակ ևս նրա կեանքն անցնում է իւր հասակակիցների շրջանում դաշտում ու սարում։ Բանից ազատ ժամանակը միայն տէրտէրի մօտ է գնում կարդալու։

Այս է ահա ամբողջ մանկութիւնն իւր ընդհանուր գծերով։ Գրեթէ բոլորովին ազատ թողած երեխան մեծանում է բնութեան

1) Այս խաղի մասին տես մեր յօդուածն «Ազգային Վէպ», «Մուրճ» 1889, № 11. Կր. 1755 հա.

ձեռքին ինքն իր գլխու Բայց և նա մատաղ հասակից սկսած տան համար աշխատող ձեռք է. մանկութիւնից սովորում է չարքաշ կեանքի, Թափառում է լեռների վրայ և անտառների մէջ, ենթա-կայ ցրտին ու արեւին: Մի օրուայ մէջ ահագին ճանապարհ է կտրում հօտերի ետեից ընկած: Հեշտ չէ ապրուստ ճարելը. կեանքն անապահով է. միշտ պատրաստ կան աւազակներ, աւարառուներ և գաղաններ: Եւ մանուկն այդ կեանքի մէջ եփոււմ, բրտանում է և դիմացկուն դառնում: Նրա մարմինը զօրանում է, բայց միտքն ու հոգին մնում սահմանափակուած իւր պապերի աւանդութեան մէջ:

Աղջիկը մանկութիւնից սկսած տանն է մնում: Սովորում է քարգահ անել, նախշել և պատրաստուել ապագայ տանտիրէնու-թեան: Նա ոչ մի զուարճութիւն չունի, բացի պարելուց, շեայլի խող բռնելուց, և շշանիման խաղալուց. այն էլ մեծ մասամբ տղամարդին դիւր գալու համար, որպէս զի ազապ տղայքը նային և հաւանեն: Աղջկերքը փոքր հասակից արդէն նոյնպէս աշխատող են և աւելի քան տղայքը: Տան ջուրը նրանք են բերում թէ աղ-ջիկ և թէ հարս ժամանակ, բայց և այնպէս այս գործը ջանքինե-րի համար զուարճութիւն է, որովհետեւ տնից դուրս են գալիս և մի կէս ժամ իրենց հասակակիցների շրջանում անց կացնում: Զուր բերելիս մինչև անգամ խաղ ու երգ են ասում և պար բռ-նում:

Ամուսնութիւնից յետոյ, որ մեծ մասամբ լինում է ծնող-ների կամքով և ընտրութեամբ, աղջկայ վիճակը փոխւում է: Ճգամարդ որ կայ՝ գլուխ է. կնիկ որ կայ՝ ոտ է» (7-րդ, 5): Աղ-ջիկը դառնում է իւր գլխաւորի աղախինը և պիտի ապրի իւր մարդու համար և ամեն տեսակ ծառայութիւն անի նրան: Գինը իւր մարդու շորերը լուանում է, նրան լողացնում. նոյն իսկ երբ գիշերը մարդը պիտի վերկենայ, պահանջում է, որ կինը ելնի, ճրագը կպցնի, իւր հազուստն ու զէնքերը բերի և այլն: Մարդ ու կնոջ յարաբերութեան մէջ փափուկ զգացմունք ու գորովանք չառ-կայ, բայց մարդու վարմունքն ընդհանրապէս բռի է, կոշտ ու կո-պիտ, այն աստիճանի, որ երբեմն նոյն իսկ ճեացի է ուտեցնում: Կնոջը, որին սիրում է: Եւ այս բրտութիւնն իշխում է բոլոր դա-սակարգերի մէջ:

Ճիշտ է, վէպի մէջ յիշում են Թագաւոր, իշխան, հոգեւորա-կան և ուսմիկ Ժողովուրդ, կան և արհեստաւորներ՝ ջուլհակ, դար-բին ու որմնագիր, բայց զրանք բոլորը իրենց նիստ ու կացով ու բարբերով և հասկացողութեամբ իրարուց չեն տարբերում: Մամիկ և իշխան ճաւասարապէս նոյն բռի գիւղացին են: Նրանց

հաւասարեցրել է նոյն չարքաշ կեանքն ու նոյն բնութիւնն ու կրթութիւնը:

Թագաւոր անուան տակ հանդէս է գալիս կամ մի գիւղական ազգեցիկ տանուտէր, ոչս. կամ մի հին մելիք, ինչպէս եղել են Ղարաբաղի մելիքները, կամ թէ մի քրդական ցեղապետ՝ երբեմն անկախ, երբեմն ենթարկուած ուրիշին, որ իրենից աւելի զօրեղ է: Նա նահապետ է իւր ամբողջ ցեղի և գաւառի: Օրէնք չկայ ի հարկէ: Նա կառավարում է և հրամայում իւր հասկացած ձևով. կարգադրում ժողովրդի վիճակը իւր ցանկութեամբ. վայելում է ընդհանրապէս մեծ յարգանք. բայց երբ մի չարիք է հասցնում ժողովրդին, վերջինս պատրաստ է ըմբոստանալու և ասելու՝ «քո Թագաւորութիւնը քո գլխով գիպին» կամ, «ոչ իշխանը լինի, ոչ Արլաղը»: Իշխանութիւնը ժառանգական է և որդէցորդի անցնում է անդրանկին ուղիղ գծով. բայց եթէ որդիքն անչափահաս են, կառավարում է հօրեղբայրը կամ քեռին, որ և որբերի խնամատարն է լինում: Ժառանգն ազատ տէր է իւր հօր իշխանութեան և ստացուածքի. բայց և հայրն ազատ է կտակ անելու և իւր կտակով այս կամ այն բանը սրան կամ նրան թողնելու: Աղջկերքը չեն զրկում ժառանգութիւնից և մեծ օժիտներ են ստանում, նոյն իսկ հօր կալուածներից:

Թագաւորի և իւր ժողովրդի յարաբերութիւնը շատ մտերմական ու հասարակ է: Նոյն իսկ ռամիկն ազատ էլ ու մուտ ունի նրա մօտ. գալիս է իւր ցաւերը յայտնելու և զանգատուելու: Եւ Թագաւորն անմիջապէս անօրինութիւն է անում. ժողովուրդը թէպէտ ենթարկուել է Թագաւորին, բայց ճորտ ու ստրուկ չէ: Կարող է ազատ կերպով թողնել հեռանալ իւր բնակութեան քաղաքից ու գաւառից, եթէ Թագաւորը չի լսի իւր բողոքին: Բայց այդպիսի բան չի լինում մեր վէպի մէջ, սասունցիք ընդհանրապէս սիրում են իրենց տիրոջը, որի մահուան համար նոյն իսկ եօթ տարի սուգ են անում: Եւ այս շատ հասկանալի է, այդ տէրերը նախ ժողովրդի վրայ են մտածում և նրա հոգսը տանում, ապա իրենց: Ոչ մի բան այնքան չի պարզում իշխողի և ռամիկի այս նահապետական յարաբերութիւնը, որքան Դաւթի և իւր հղբայր նախորդի անկեղծ, բարեկամական սէրը: Նրանք իրար շատ մօտիկ և սերտ կապուած սրտեր են, բայց և երբէք չի մոռացւում վէպի մէջ, որ մէկը իշխող է, միւսը՝ իշխուած. մէկը իբրեւ տէր հովանաւորում ու պաշտպանում է միւսին, որ իւր կողմից ծառայութիւն է անում իւր տիրոջ որդուն: Եւական տարբերութիւնը իշխողի և ռամիկի մէջ այս է, որ մէկը հրամայող է, միւսը՝ լսող, իշխանը կարող է բանեցնել ժողովրդին, և նա սիրով բա-

նում է. նա հարուստ է, երկիրն իրենն է. ունի շատ ձիեր, խաշն և արջառ, շատ ոսկի և արծաթ, և ամենը հարկաւ ուսմկից է առնում, որ աղքատ է, օրական հացի կարօտ։ Այն տանում է ժողովուրդն այդ, որովհետեւ իշխանը դրա դիմաց և մի մեծ պարտականութիւն ունի։ Նա կռուող է, զինուոր է, և հովանաւորում ու պաշտպանում է ուսմկին յատկապէս այլազգիներին հարստահարութիւնից։ Այն աւազութիւնից, նա պահում է իւր երկիրը դրսի թշնամիների աւերմունքներից։ Առանց թագաւորին՝ ուսմկը մի շատ անհար արարած է, թոյլ ու ողորմելի։ Բայց դա ի հարկէ Սասունցի, հին սասունցի ուսմկը չէ, այլ 19-րդ դարու մշեցիին, մոկացիին կամ պարսկահայը։

Բացի Զոշանց Մեծ տան անդամներից, որոնք թագաւորում են, կան և շիշխանները, որոնք առանձին դեր չունեն։ Դրանք հին ազնուականներն են։ Նրանցից միայն խորհուրդ է հարցնում թագաւորը երկրի համար կարևոր նշանակութիւն ունեցող դէպքերի ժամանակ։ Դրանց մասին առ հասարակ հարեանցի է անցնում վէպը։ Աւելի սիրով խօսում է հոգեւորականների վրայ, որոնք ընդհանրապէս շատ լաւ կողմերով են պատկերանում վէպի մէջ։

Հոգեւորականը իւր ժողովրդի հոգեւոր դաստիարակն է. ուսման ներկայացուցիչը, իւր հօտի հետ տառապողն ու պանդխտողը։ Նա մարդկանց մէջ հաշտութիւն բերող է, բարեպաշտութիւն դարձնող, հսկող, որ չարից չխափուեն մարդիկ, գիւղական քահանան բացի սովորական ծիսակատարութիւններից՝ պսակ, պատարագ և այլն անելուց, պահում է և դպրոց։ Նա գլուխ է գիւղական հասարակութեան, խօսքին լսում են ամենքը, խորհուրդը կատարում։ Նրա տունը բաց է եկուորի առաջ, որ մի սովորական հիւրասիրութիւն չէ, որ ունին ամենքը և աւելի մեծ չափով Զոշանց տունը, այլ բահանան օտարականի համար մի բարեգութ հայր է։ Հենց այդ պատճառով ժողովուրդը և իշխանը սիրում և յարգում են նրան և նրա օրհնութիւնն առնում։ Վանքերում ապրող եկեղեցականների համար հոգում են առանձնապէս իշխանները, ամեն ապրուստ տալիս նրանց, բացի երկրի համար և իշխանի յաղթութեան համար աղօթելուց՝ քարոզ են տալիս ժողովրդին և սովորեցնում։ Առհասարակ եկեղեցականը շատ զաղափարական պատկերով է ներկայանում վէպի մէջ, և դա ցոյց է տալիս մեր եկեղեցականների իսկական կրթական նշանակութիւնը, որ ունեցել են անցեալում։ Ժողովուրդն ևս շատ բարեպաշտ է, բայց մենք այդ բարեպաշտութեան, կրօնական աշխարհայեցողութեան, հաւատալիքների և սովորութիւնների մասին, ինչպէս և հայի և այլազգու յարաբերութեան մասին առանձին կը վերցնենք։

Որովհետև եթէ վերևում դրած մի քանի կեանքի գծերը մեծ մասամբ միայն Սասունցիներինը չեն, աւելի ևս այս վերջին կողմերով վէպն ընդհանուր ազգային բնաւորութիւն է ստանում:

Ամփոփելով այս գլխի բովանդակութիւնը, մենք գտնում ենք, որ վէպի մէջ բաւական մեծ ճշտութեամբ նկարագրուած է Սասունն իւր սահմաններով, իւր ժողովրդով ու ժողովրդի պարագմունքով և այլն: Դա իրական պատկերն է Սասնոյ, միայն բանաստեղծօրէն ըմբռնուած ու արտայայտուած: Նոյն իրականութիւնը գտնում ենք և վէպի գործողութեան մէջ, որ Սասնոյ պատմութեան յիշողութիւնն է: Բայց նախ քան այդ պատմականին անցնելու, թուենք այն տեղերը, ուր կատարուած է վէպի գործողութիւնը Սասունից դուրս:

Դ.

ՈՒՐԻՇ ՎԻՊԱԿԱՆ ՏԵՂԵՐ

Սասունից յետոյ վէպի մէջ գլխաւոր տեղը բռնում է Մար կամ Մարայ տեղ (= դեխ, դեհ, կողմ), Մարայ քաղաք: Ո՞րտեղ է այս երկիրը և թնչ է հասկացուած այս անուան տակ: Վէպը բաւական անորոշ տեղեկութիւն է տալիս այս մասին, իսկ վիպասաններն իրենք ոչինչ չգիտեն:

Սրուանձտեանը գրում է. «Մըսըր գուցէ Մուսլ կամ Մուսուլ լինի, որ հաւանականութիւն կը վերցնէ, և Սասնայ տիրապետութեան սահմանէն շատ հեռու չէ» (Գր. ու Բր. 129): Սակայն, ինչպէս կը տեսնենք, վէպի մէջ առանձնապէս յիշուած է Մուսուլ՝ առանց շփոթուելու Մարայ հետ, և այդ ենթադրութիւնը համապատասխան չէ նոյն իսկ իր՝ Սրուանձտեանի պատմութեան նկարագրին, որից պարզ երևում է, որ Մսըրը Հայաստանում է և սահմանակից Սասնոյ տէրութեանը յատկապէս վերջինիս հիւսիս. արևմտեան կողմում (1-ն, 145): Մարամելիքը գրաւում է Դաւթի հօր մուլքը, շուրջ Մծմակայ գլխէն կերթար հար ի Սեղանսարու գօտին» (1-ն, 158), և երբ նա Դաւթի վրայ է գալիս, բանակ է դնում Սեղանսարու գօտին. (1-ն, 162): Մսըրն ուրեմն ճապաղջրից արևմուտք է ընկնում:

Բոլոր պատմութեաններին մէջ ևս Մսըրը սահմանակից է Սասունին. «Ես ու էգիկ հող ու ջրի շիրիք ենք,—ասում է Դաւթը Մարամելիքի համար,—մեր մէջ վէճ բացուաւ ու կռիւ էրեցինք, էդ ինձի թրով զարկեց, հպա ես չզարկեմ» (3-րդ, 26): Եւ Դաւ-

թի վէպի առաջին ճիւղն ամբողջ այդ հող ու ջրի վէճն է: Մարա-
մէլիբը Մհերի որդիներին պահելու վարձ է առնում Ճապաղջու-
րըն ու Մովսսարը, կամ յափշտակում է սասունցիներէից (3-րդ,
26, 31 հտ. 7-րդ, 67): Այս տեղերում իրենց հօտերն են արա-
ծեցնում Մարամելքի «էլը», որ Դաւթին ճանաչում ու պատում
են իրրև իրենց հին աղայի որդուն: Ուրիշ պատմութեան վրա-
բամելքի «էլը» արածացնում է հօտերը Մովսսարի միւս երեսին,
այսինքն հիւսիսային լանջերին, ուր առաջ սասունցիք էին եայ-
լաղ գնում:

Այսպէս ուրեմն Մարամելքի բուն երկիրն ընկնում է Տաւ-
րոսի հիւսիսային կողմը. Մծմակայ ըթից, Մովսսարից, Սեղան-
սարից ու Ճապաղջրից դէնը, Բայց նա իբրև տէր Բալուայ դաշ-
տի և Տարօնի մի մասի՝ գրաւում է և Ճապաղջուրը, Սեղան-
սարն ու Մովսսարը: Մի քանի պատմութեանցից մէջ Մարամելքն
այս կողմերից էլ հէնց յարձակում է զործու. և Մուրադ զեռն
անցնելով դալիս Սասնոյ վրայ: Հիւսիսային արևելեան կողմում
Մարամելքին ենթարկւում է և Տարօնի սահմանակից Խլաթը
(7-րդ, 68 հտն):

Միւս կողմից Սասնու մասին գրելիս տեսանք, որ Մուրն
ընկնում է Սասնից հարաւ, և երկսի սահմանն է Բաթմանայ կա-
մուրջն ու դէպի արևմուտք Անգղայ ձորը, հին Անգեղոսան գա-
ւառը ուր և Անգեղ բերդը, այժմեան Ազլ կամ Էգիլ կոչուած
գաւառակը, որից դէպի հիւսիս Բալուայ դաշտն է ընկնում: Կը նշա-
նակէ Մուրն ըստ վէպի մի իշխանութիւն է, որ շրջապատում է
Սասնոյ բարձրութիւնը չորս բոլորից, և նրա մէջ են Բալուան ու
երբեմն Ճապաղջուրը, Տարօն ու Խլաթ, Սասնու հարաւում Ար-
զնի դաշտը և ապա Էգիլ գաւառակը:

Մարայ իշխանութիւնը սակայն միայն այդքանը չէ: Նրա
մէջ են ըստ վէպի Դիարբեքիը, Հալաբայ քաղաք և Հալեքից դէ-
նը Մարայ քաղաք: Այս իշխանութեան մէջ է և Մաքամաղին, այ-
սինքն Մեքքա, Մեդինէ: Եւ վերջապէս Մարամելքի համար գըտ-
նում ենք. «էդի Մարայ մելիքն է, Հնդայ ամիրէն է, ու Բաղդադու
խալիֆէն է» (3-րդ, 35, 47, 114 հտն.):

Այսպիսի մի ընդարձակ սահմանով տէրութեան, որ շրջա-
պատում է Սասունը և որի մէջ են Դիարբեքիը, Բաղդադը, Հալեք
և Մեքքա Մեդինէ և նոյն ինքն Մարայ քաղաք, շատ պարզ է,
որ իսկ Մարայ, այսինքն Եգիպտոսի տէրութիւնն է՝ էյուբ
իան կամ, մեր պատմագիրներին, Ետլեան հարստութեան ժամա-
նակ (1169—1250 թ.), և Մարայ մելիքները Եգիպտոսի մելիքներն
են, ինչպէս կոչւում են այդ թագաւորները: Մենք յետոյ կը տես-

նենք այդ հարստութեան մասին, երբ կը գրենք պատմական յիշողութիւնների համար:

Բայց ինչ է Մսրայ քաղաքը: Դա երբեմն Հալերից դէնը, ուրեմն դէպի Նգիպտոս է երևակայուած, երբեմն Սասունին մօտիկ, Պատմութեանցներից չի երևում թէ զա մի որոշ քաղաք լինի: Եւ իսկապէս էյուեան հարստութեան ժամանակ մի հատ քաղաք չկայ իբրև ամբողջ պետութեան մայրաքաղաք. Նգիպտոսում Կահիրէն է կեդրոն, Ասորիքում Դամասկոսն ու Հալեբը, Միջագետքում Դիարբեքիրը, և բացի դրանցից Հիջազում սրբազան քաղաքները՝ Մեքքէ ու Մեդինէ: Մսրայ քաղաք անունը թւում է թէ մի ժողովրդական ընդհանուր կոչում է Մսրայ իշխանութեան մէջ եղած այս կամ այն գլխաւոր քաղաքների, որոնց հետ գործ են ունեցել սասունցիք: Այստեղ այսքանը միայն յիշենք, որ Մսրայ մեծքներն այլազգ են ու տաճիկ, այսինքն մահմեդական. Մսրայ քաղաքում կան մուլա ու մզկիթ (3-րդ, 85, 6-րդ 2, 8-րդ 16):

Բաղդադի խալիֆայութիւնն առանձին տեղ է բռնում վէպի մէջ: Վերևում տեսանք, որ Մսրայ մեծքը Բաղդադու խալիֆայ է համարուած. բայց դա վիպական շփոթութիւն է միայն, յիշողութիւն այն բանի, որ Բաղդադու խալիֆաներն իրօք ենթարկուել են Մսրայ մեծքներին: Մսրայ մեծքն ուրեմն, որ ժամանակով աւելի նոր է, բռնել է Բաղդադի խալիֆայի տեղ: Շատ պատմութեանցների մէջ, սակայն, Բաղդադու խալիֆայ և Մսրայմեծք դեռ տարբեր են: Բաղդադու խալիֆան ներկայանում է իբրև շատ զօր ու զօրեմտեղ՝ թագաւոր, որ մի քանի անգամ զօրք է ժողովում, զալիս մեր ազգի վրայ կռիւ և յատկապէս Մշոյ Սուրբ Կարապետի վրայ, ու շատ առ ու գերի տանում: Նա տիրում է Մովսսարին, որ Սասնու տէրերը խլում են նրանից, և նա Սասնոյ վրայ է զալիս և աւերում (1-ն, 137 հտն. 7-րդ, 50): Բաղդադում թագաւոր նստում են այս հզօր խալիֆայի թոռները, որոնք սակայն յետագայում վէպի մէջ թոյլ ու վախկոտ են պատկերանում: Ուրիշ պատմութեանցներով այս խալիֆայի տեղ նստում է Բաղդասար կամ իւր եղբայրը, որ և իբր թէ շինում է Բաղդադ քաղաքն իւր անունով. իսկ փոքր Մհերն այդ տեղ Բաղդասարի գերեզմանի վրայ շքանշան խորան ժամ է շինում Սուրբ Սարգիս անունով (որ մինչև այժմ կայ ըստ վէպի): Վերջին պատմութեանցներն ուրիշ աւանդութեանց յիշողութիւն են, եկած կցուած Բաղդադու անունանը, բայց Բաղդադու խալիֆան իւր արարքներով ասել չի ուզիլ արաբական տիրապետութեան և յատկապէս Բաղդադու խալիֆայութեան (750—1258 թ.) յիշողութիւն:

է, Այս խալիֆայութեանն ահա փոխանակել են յետոյ նորագոյն-
աւելիի զօրեղ Մարայմիլիքները, և այն կոիւր, որ սկզբում պատ-
մուած է եղել Բաղդադի խալիֆայի համար, մեծ մասամբ շուռ է
եկել Մարայ միլիքի վրայ, Մի պատմուածքի մէջ գեռ սակայն Մարայ
միլիքի այս կոիւր կրկին պատմուածք ունի, թէ Բաղդադու խա-
լիֆայի և թէ Մարայ միլիքի համար, և այս երկուսը վէպի մէջ ևս
ժամանակով մէկը միւտից յետոյ են գալիս. «Դառնիկ որբիկը, որ
Բաղդադայ խալիֆին սըպանեց, ընտու թագաւորութիւնը վերջաց-
րեց, Մարբ միլիք կար, Մարայ քաղաքին էր նստում: Էդ Մարայ-
միլիքը որ լսումս թէ Բաղդադայ խալիֆը վերջացեր է, Դառնիկ
որբիկն է մուտեր է, եկաւ Մովսսար տիբեց» (7-րդ, 68):

Միջազգետիք քաղաքներից վեպի մէջ յիշուած են և Մուսուլ ու Ջօրիւս քաղաքը Ջօրիւս քաղաքը, այսինքն Տիգրիսի վրայ, Այս քաղաքի հետ, որ հարեանցի է յիշուած, կապուած է Մհերի մի սխրագործութիւնը: Դետը մի քանի անգամ ելնում աւերում է քաղաքը. բայց Մհերը մի ահագին քար շալակում, բերում ձգում քաղաքի քամակը գետի մէջ, որ երկու ճիւղի է բաժանուած, և այլ ևս չի աւերում քաղաքը: Բայց ասում են. «մէկ ժամանակ տ'իշնի Ակն Անանին, տ'աւերի քաղաք Ջօրիւն: Դետի մէջ իւր ձգած քարի վրայ Մհերը յիշում է Վերջայ բալաբը: Իսկ Մուսուլ քաղաքը իւր Թագաւորով մասնակից է վեպի բուն՝ գործողութեանը: Երբ Դաւիթ Դիւրջիստանից վերադառնում է, Մուսուլայ Թագաւորը մարդ է ուղարկում և կռիւ պահանջում Դաւիթից. կռուի մէջ Չմշկիկի Մուլթանն սպանում է Դաւիթին, իսկ Մհերը հօր ժահուան վրէժն առնում է Մուսուլայ Թագաւորից և սպանում Չմշկիկին: Մուսուլի այս Թագաւորութիւնը յիշողութիւն է հաւաստեալ Մուսուլի Սելջուկ Զանգեանների աթարեակութեան (1127—1234 թ.), որոնց մի ճիւղը առանձնացած կազմում է Ջօրիւի աթարեակութիւն (1180—1250 թ.), որ և ողնշանում է Թաթարաց արշաւանքների ժամանակ՝ ինչպէս Բաղդադի իսլամիստութիւնն ու Մսրայ մեկիքների Ետիան հարստութիւնը: Մուսուլի Թագաւորութիւնը սակայն վեպի մէջ շատ պարզ կերպով յիշուած է նախի հետ:

Խաթաբայ Երկիր, եղբայր քաղաքացիներ, խաթ բաղաժը
Նեմուր սարի ստորոտում բաճախ յիշում է վէպի մէջ:
Խաթայ մի թագաւորը, Մեղքոն անունով, ժամանակակից է Ղուրս
գալիս Բաղդադի հօր խալիֆայի. նրա մօտ են ապաստանում
Սանասար և իւր եղբայրը. (3-րդ, 16): Այս բաղաժի վրայ է յար-
ձակում Մսրայ միւրքը, որ և հպատակեցնում է իրեն (3-րդ, 38,
ծան. 7-րդ, 68 հան.) Այս բաղաժի իշխանի աղջիկն է Ռանդուխ-

խանութ, որ Մարայ մելիքի նշանածն է, որին և առնում է Դաւիթ, Ուրիշ պատմութեանը իշխանի այրի կնոջ հետ սիրային յարաբերութիւն է ունենում Դաւիթ, և երբ սա խանդութիւն առնելուց յետոյ անցնում է իշխանի մօտով՝ իշխանի դէմնին դուրս գալիս ու կռիւ պահանջում, որի մէջ սպանւում է Դաւիթ մի աղջկանից կամ իւր սիրականից, Զմշկիկ Սուլթանից: Մհեր հօր վրէժն առնելով աւերում է իշխան (3-րդ. 49 հտ. 1-ն, 177 հտն. 9-րդ 458. 449, 455): Մի պատմութեանը իբրև իշխանի տէր յիշում է Զէնով Յովան, Դաւթի քեռին. և Մհերն հօրից խոզվելով գնում է իշխան (3-րդ, 23, 38. 6-րդ, 54):

Իշխան մեր պատմութեան մէջ արաբական շրջանում մեծ դեր է խաղացել, առանձնապէս 12-րդ դարում, երբ առանձին թագաւորութիւն ունէր Շահի Արմեն կոչուած հարստութեան ժամանակ (1100—1207 թ.), որոնց նուաճում են եգիպտոսի կամ Մարայ Ետլեան մելիքները, որի յիշողութիւնը և պահել է վէպը:

Իշխանի Շահի Արմենների իշխանութեան մէջ է եղել և Մանգղկերաբ, որ վէպի մէջ յիշում է Մանգղկերաբ քեդ անունով, որտեղ նստում է հայ իշխան Թաթարոս անունով, որի աղջիկն առնում է Մանասարի որդի Մհերը, և աղջկայ հետ հարսնադրեր գնում Քեռի Թորոսը, Դաւթի քեռին: Մենք յետոյ կը տեսնենք, որ Քեռի Թորոս և Զէնով Յովան իրար փոխանակում են. իսկ Զէնով Յովան իբրև Դաւթի քեռի իշխանի տէրն է: Այս երկուսն ևս սակայն շփոթւում են Կապուտկողայ թագաւորութեան հետ:

Կապուտկող, հին ձևով Կապուտոզն, կամ Ընձաքիարս կամ Ընձաքի սար գտնւում է Վանայ ծովի հարաւային եզերքում, Ռշտունեաց մէջ: Կապուտկողի թագաւորն ըստ վէպի հայ է. նրա մօտ ապաստանում են Մանասար և իւր եղբայրը, որոնք և նրանից ստանում են քառասուն տուն ու գալիս շինում Մասուն: Արամելիքն առնում է Կապուտկողի թագաւորի աղջիկը, որի հետ Մասուն գնում է Քեռի Թորոսը (1-ն, 141 հտն.): Ուրիշ պատմութեանը կապուտկողի թագաւորի աղջիկն է խանդութիւն (3-րդ. 40 հտ. 9-րդ. 438 հտ.): Մի պատմութեան մէջ սակայն խանդութիւն իշխանի է, իսկ Կապուտկողի է խանդութիւն ուսիսը (Զմշկիկ Սուլթան), որ սպանում է Դաւթին (9-րդ. 69):

Կապուտկողայ թագաւորութիւնը, ինչպէս կարծում ենք, հին Ռշտունեաց իշխանութեան և Վասպուրականի հայոց Արծրունեաց թագաւորութեան յիշողութիւն է, որ մտել է վէպի մէջ: Այս ժամանակի յիշողութիւնից են մնում վէպի մէջ և Ոստանն ու Վանայ բերդը:

Ոստան գիւղը Վանայ ծովի հարաւային ափին է, Ռշտու-

նեաց մէջ, Վան քաղաքից հարաւ-արեւմուտք, Մօսի քաղաքեան գլխին շինուած է հին Ոստանայ բերդը, որից դէպի ծովը հանում է Եկապան փոքեալ ի նախնեաց ընդ քարաժայռ վէճ լերին անհնարին աշխատութեամբ՝ շրջապատյաւ և անձուկ յոյժ, մանաւանդ ի վերին կողմն. ընդ որ մի միայն հեծեալ կարէ անցանել, և այն ի տեղիս տեղիս հետեակ գնալով. այս անձկագոյն վայր կապանին տէ՛է իբրեւ մի ժա՛վ. իսկ ստորեւ շակաւ առ սակաւ լայնանայ մինչև ի ծովն. և այսպէս անհնարին է յայսմ կողմանէ ունել թշնամոյն ժուտ ի նախնի բերդն, զի մին կարող է ընդդէմ կալ հազարաց (Նոր Հայ. եր. 159): Ռշտունեաց Ոստանը յաճախ կարևոր դեր է խաղացել յատկապէս Արծրունեաց թագաւորութեան ժամանակ և յետոյ: Բերդը շինել է Գագիկ Արծրունին: Վէպի մէջ յիշում է Ոստանայ կապանը. երբ Մհերն ուզում է Վան գնալ, Ոստանայ իշխանը ակապ եթալ զՄհեր կապեց: Մհերն ազատուում է, իսկ ձին մնում. բայց յետոյ գալիս ձին էլ ազատում է (3-րդ, 149):

Ոստանի հարաւ արեւմտեան կողմը, լեռան զառիվայրի վրայ, Ոստանին ձօտիկ է և Փառապետ գիւղը: Երբ Դաւիթը Պանդուխտի ձօտից գնում է փահլեանների վրայ, Պանդուխտ պատուիրում է Քարադաշտ չգնալ կռուելու. Դաւիթ չի կատարում այս հրամանը և վտանգից ազատուում է Ձէնով Յովանի ազգաբարձութեամբ (3-րդ, 46):

Վէպի մէջ աւելի կարևոր դեր ունի Վան քաղաքը, որի բերդի հիմը ձգում է Թեաթորոս (3-րդ, 22): Մհերն աշխարհից ձանձրացած գալիս է Ոստան և ապա Վանայ քաղաք: Վանայ քաղաքի տէրն ևս թշնամութեամբ է վարում և չի թողնում Մհերին այդտեղ մնալ: Եվանայ քաղաքից հեռու իսկ իսրաւոր (սանդուխ) կայ, կասեն Քիւրիկ Ջալալու ոտաց տեղն ի՞նչ: Մհեր յետ է դառնում և մօր գերեզմանից հրաման ստանալով՝ նորից գալիս է Վանայ քաղաք: Երբ հասնում է Վանայ դաշտ, տեսնում է ամէկ ազաւ կէր կը խօսէր: Նետով վերաւորում է ազաւին, որ թռչում մտնում է մի քարայր. Մհեր ձին քշում ետեից մտնում է այրը և էլ յետ չի դառնում. ձիու ոտքը թաղում է հողի մէջ, դուռը փակում է, և այնտեղ մնում մինչև աշխարհքի վերջը: Են տեղաց անունն էլ Ագուաւու քաղաք: Ինչ ազաւ մտաւ էն տեղ. էն դիմաց կասեն Ագուաւու քար: Դա կոչում է և Վանայ քար, Աղբբփու քար, Ակոափու քար, Շաղբաղու քար, այլ և Տոսպան Բուր, ուր է Մհերի այրը կաւ Մհերի դուռը (1-ն, 182. 3-րդ. 147 հտ. 6-րդ 74. 7-րդ, 44. 9-րդ, 398, 460, 8-րդ 49), այլ և Խըղըր քար (5-րդ, եր. 525): Ակոբի Վանից հարաւ արեւելք մի լեռ է, որի գլխին կայ

«վերամբարձ քար մեծ, զոր կոչեն Ակուրի քար, որոյ մէջն է դա-
դարկ քարայր. ունի և քարեղէն դուռն փակեալ մեծ յոյժ, առ
որով երբեմն երբեմն հոսի ջուր» (Նոր Հայ. 143): Իսկ Սրուանձ-
տեանը նկարագրում է. «Վանայ բերդէն դէպ յարևելս նայելով
Այգեաստանեայց հիւսիսակողմը փոքրիկ լեռնագոտի մը կայ, որոյ
արևելեան գլուխը կըսուի Զըմփզըմփ մաղարայ, արևմտեան ծայրը
Ագրփի, և մէջտեղը Մհերի դուռը.. Զըմփզըմփ մաղարան քարայր
մի է ընդարձակ... Մհերի դուռը ամենալերջ քար է, զոր տաշեր և
կոկեր են մեծ դրան ձևով և վրան բեկազրեր դրած են... Մհերի
դրան վերէն սև ջուր մը կաթ կաթ կը ծորի: Եւ կըսեն. «Մհերն
և իւր ձին Աստուծոյ հրամանով փակուեր են այն տեղը: Այս սև
ջուրը Մհերի ձիու շեռն է» (Գրոց ու Բրոց. 132 հտ.): Իսկ Շահ-
բաղին Ագրփիի դէմն է, ուր և այգիներ (Սրձտ. Մանանայ, եր. 82):

Ըստ 5-րդ պատմութեամբի Վանայ քաղաքի փաշայի մօտ են
ապաստանում իրենց հօրից փախած երկու եղբայրները: Սրուանձ-
տեանը (Գր. Բր. եր. III) այստեղ Վարազայ դաշտի մէջ դնում է
Պղճձէ փաղաք, երեք աւերակի անուն: Անշուշտ այս է Վէպի մէջ
յիշուած Պղնձէ քաղաքը, որի Թագաւորի աղջկան առնում է Սա-
նասար կամ իւր եղբայրը (3-րդ, 69 հտ. 143. 9-րդ, 408): Մի
պատմութեամբով, սակայն, Պանդուկի հայրենիքն է Պղնձէ քաղաքը
(3-րդ, 42):

Վէպի մէջ այնուհետև յիշուած է Կաղզուան, որի ամիրայի
աղջիկն է Պանդուկ խանումը (1-ին. 165): Այստեղ, տեսանք,
կայ Պանդուկի բերդ և ձոր: Կաղզուանի մօտ է հզել հին Կա-
պուսայ կամ Կապոյոս բերդը, որ նոյնացնում են աւելի հին Ար-
տագերս բերդի հետ, և որ առանձին դեր կատարել է Բագրա-
տունեաց առաջին Թագաւորների օրով: Մի պատմութեամբի մէջ
Պանդուկի հայրենիքն է «Բերդ Կապոտին» (3-րդ, 40), որ պէտք
է կարծել թէ այս Կապոյոս բերդն է Կաղզուանի մօտ: Կապուտկող
և Կապուտայ բերդ անունների նմանութիւնը հաւանօրէն պատճառ
է դարձել գործողութիւնը մէկից միւս տեղ փոխադրուելու:

Կաղզուանից արևմուտ յիշուած է Արգուս, իսկ հիւսիս՝ Կարս
որոնք ունին առանձին ամիրաներ, որոնց մօտ ապաստանել են
ուզում Սանասար ու իւր եղբայրը, բայց չեն ընդունում (1-ն,
141): Արգրումի և Կարսի բերդերի հիմն ևս դնում է Թևաթորոս
(3-րդ, 22): Հայաստանի հիւսիսակողմում յիշատակում է Զանգ-
ռուայ դուռան, որ տեսանք, և ապա Լոռի, իւր փռչկանով, որ
Դաւթի ոսոխն է իբրև Պանդուկին ուզող (3-րդ, 45 հտ. 57 հտ.
1-ն, 169 հտ.): Լոռին, ինչպէս կը տեսնենք, առանձին դեր
կատարել է 11-րդ և յետագայ դարերում թէ հայոց Լոռուայ

Թաղաւորութեան և վրաց տիրապետութեան ժամանակ:

Նոյն դարերի յիշողութիւն է վէպի մէջ և Գիւրջխտանի, այսինքն Վրաստանի յիշատակութիւնը, ուր գնում է Դաւիթ Պանդուկի համար աղախին բերելու, նախնապէս իւր համար կին առնելու, կամ իր փաշլեաններին պսակելու (3-րդ, 129, 134. 7-րդ, 38 հտ. 8-րդ, 44): Այստեղ է գնում և Մհերը, որի կինը Դաւթի բերած գիւրջու աղջիկն է: Նա նուաճում է և Թաւրթեւանը, այսինքն Լեզգիներին, Կովկասեան լեռնաբնակներին, ինչպէս հասկանում է վրպասանը (3-րդ, 137):

Մի պատմութեամբով (3-րդ, 130.) Դաւիթ ուզում է Գիւրջխտան գնալ աղջիկ բերելու, բայց ճանապարհին միտքը փոխելով՝ գնում Հաղբեղան, այսինքն Ատրպատական, որի Թագաւորի աղջկայ նաժիշաններին առնում է իւր փաշլեաններին, իսկ իրեն՝ Թաղաւորի աղջկան բերում Սասուն, պսակում Մհերի հետ և ուղարկում Հաղբեղան Թագաւոր: Այստեղից նոր Մհերը գնում է Գիւրջխտան: Բայց շարունակութեան մէջ կինը մէկ Հաղբեղանում է յիշում, մէկ Գիւրջխտանում: Պարզ կերպով երևում է, որ Հաղբեղանը նոր է փոխանակել Գիւրջխտանին, որովհետև Մհերի կինը միշտ գիւրջու աղջիկ է յիշում: Սակայն Իրան, Իրանայ քաղաք, կամ Թաւրիզ մի քանի պատմութեան մէջ հաստատուն կերպով դրւում է իբրև Պանդուկի հայրենիք: Սասունից Իրան Դաւթի ճանապարհն է Ճաժուան, Բանդումահի, Գործութայ դաշտ. «ճաշն կերաւ Ճաժուան, խրամենց գնաց Բանդումահին, Բանդումահին անցաւ եկաւ Գործութայ դաշտ», իսկ երեկոյեան հասնում է Իրան, Իրանայ քաղաք, կամ Թաւրիզ (3-րդ, 119 հտ. 8-րդ, 38 հտ.): Ճաժուան ըստ ասացողին (7-րդ, 29) Մոկաց երկրի արևմտեան կողմն է, տեղը մեզ յայտնի չէ: Ճաժուան յիշում է միշտ Դաւթի ճանապարհին ինչպէս 9-րդ, 439. «ճաշ ուտեմ Ճաժուան, ընթրիս ուտեմ Բանդամահու կամուրջ, հրամեց ուտեմ Կապուտկող քաղաք», որի Թագաւորի աղջիկն է Պանդուկ: Սակայն այստեղ պատմողն անշուշտ շփոթել է, որովհետև Բանդումահու գետը Բերկերի գաւառում է, Վանայ ծովի գետակ հիւսիս արևելեան կողմում և Սասունից Կապուտկող գնալու համար այդ ճանապարհը չեն բռնի: Նոյն գաւառում է Գործոք կամ Գործոթ գիւղը, որի ոչնի աղջիկ Բանայ խանումը (=Ձմէկիկ Սուլթան) ուզում է առնել Դաւթին (3-րդ 128 հտ, 135): Երբ Դաւթն առնում է Իրանայ Թագաւորի աղջկան, Պանդուկին, Իրանից մինչև Բանդումահին օժիտ են տալիս Պանդուկին, որից երևում է, որ այդ կողմերը Իրանայ Թագաւորի կալուած է, բայց երբ Դաւթ սպանւում է Գործութայ Բանայ խանումից, Մհերն ու Ձէնով Յո-

վանը թխնդիւմահու կարմնջից չուր Իրան, ինչ որ կէր, բերադի կոտորեցին»:

Մի քանի պատմութիւններով ճանդութի հայրենիքն է ետյ, խոյոյ քաղաք, որի ճանապարհն անցնում է Ճափուանի, Կապուտ-կողի և Բանդումահիի վրայով (7-րդ. 28 հտն. 3-րդ. 121): Այստեղ վէպն, ինչպէս տեսանք, բնիկ է, և 4-րդ պատմութեան մէջ գործողութեան տեղերը խոյի և Մակուայ շուրջն են գրուում: Ճանդութի հայրենիքն է Քիլիսէ, որ ըստ բանահաւարին հին Շաւարշան կամ Արտազ գաւառի մի մասի անունն է և յետոյ փոխարկուել է Սոփման անուն (ճեղքուած, քանդուած երկիր) կոչուումով: Ըստ վէպի և ըստ աւանդութեան, Դաւթի գուրգը գետին պատուելով զնացել է և ռէն օրէն էս օր ճանդութի խանրմի երկրի անուն փոխեց Սոքման անուն: Այս գաւառում են Քիլիսէ գիւղը, որի մօտ է Եանդուքի բերդը, և վէպի մէջ յիշուած Նալբայժան գետուկը, Դաստակեարի (բնագրի մէջ Դաստարարի) գետուկը, Կոնս և Կոնսա ձոր, որ տեղերով անցնում է Դաւթի Փերա գետուն, ուր պիտի կուէր ճանդութիւն ուղելու համար եկած Լանդադ թագաւորի դէմ: Փերա գիւղը խոյ, հին Ներ գաւառում է, խոյից երկուս ու կէս ժամ հեռու դէպի հիւսիս:

Հազրբեջանի կամ Իրանի, հետը և խոյ վերցրած, այս առանձին իշխանութիւնը յիշողութիւն է վէպի մէջ Ատրպատականի Աթաբեկութեան (1136—1225), որոնց տիրապետութեան սահմանները երբեմն դէպի արեւմուտք մինչև Վանայ լիճն էին տարածուում, իսկ հիւսիսից մինչև Միւսիք ու Այրարատ:

Վէպի մէջ յիշուած տեղերի կամ իշխանութիւնների անունները լրացնելու համար բերենք և հետեւեալները: Իբրև Մարասիւքի օգնական մի երգի մէջ գուրս են գալիս Անուլ Եակնն իւր Թեհրան քաղաքով, այլ Սուլթան Մուրադն ու Ֆրանկի պապը (9-րդ, 424. 430, 453): Այլմօր այն կողմում գրուում են Օղամայ և Տօղանայ թագաւորները (3-րդ, 124). մի պատմութեան մէջ (5-րդ) Բաղդադու խալիֆայի տեղ մտնում է Հեղայ մեղիք. մէջ են գալիս նոյն Չընմաչընի քաղաք. Չինմաչնայ կամ Չնայ քաղաքը, որ ուղում է Դիւրջիստանի թագաւորի աղջկան, որին բերում է Դաւթը (3-րդ, 124. 8-րդ, 10 հտ. 45 հտ.): Մինչև անգամ Լուսաստանն էլ անմասն չի մնում մեր վէպի մէջ. Որպէսզի ոչ մի բան պակաս թողած չլինենք, աւելացնենք որ կան և Ախմախու սադ (8-րդ, 8) և Չինմանի (3-րդ, 46), որոնք հաւանօրէն հէքաթային ձևով կոչուների են, Պող բլուր, որ Տարօնում պիտի լինի (1-ն, 146): այլ և Սուսադէմ և Դիլ գետ: